№ 11—12 (228) XXII ՏԱՐԻ ՆՈՅԵՄԲԵՐ—ԴԵԿՏԵՄԲԵՐ 1912

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ՎՃՌԱԿԱՆ ԹԱՄԸ

Զը խօսինք այլ ևս մարդասիրութեան, աղտրուիզմի, քաղաքակրթութեան մասին, չ'օրօրուինք այլ ևս սին ու պատիր յոյսերով, հզօրների „մարդասէր" աջակցութեան խոստումներով. շահի չոր աւետարանն է ղեկավարում ամենքին, թէ մեր „համակիր" և թէ „թշնամի" պետութիւններին. համակիրը վաղուն օրը կարող է դառնալ հակառակորդ, թշնամին կարող է դառնալ բարեկամ։ Աշխարհը—Ուժին է, բիրտ ու վայրագ ուժին... Այն մի քանի զինուած, ինքնապաշտպան խմբերը, այն մի շարք յաղթական գրոհները բարբարոս խուժանի դէմ՝ աւելի արժեն, քան տասնեակ démarche-ներ, յիշատակագիրներ, ուղերձներ։ Ուժն է, որ վերջին հանգիստի մէջ թելադրում է իրաւունքի նիւրական պահանջները և եթէ կամենում ենք մեր տրուած ու դարաւոր իրաւունքը լսելի անել հզօրներին, պարտաւոր ենք ոյժ կազմել, — մի ոյժ, որ էապէս խաղաղասէր է, ժխտող արիւնի ու բռնութեան, բայց մի ոյժ, որ գիտէ, ընդունակ է ի հարկին պատուար կանգնել իրաւունքին, իրագործել իրաւունքը, խռովելով մշտապէս դիւանագէտների եսապաշտ և իրապաշտ հանգիստը...

Այդպէս է շշնջում հայոց խուլ ականջներին ամենօրեայ իրականութիւնը, այդպէս են թելադրում իրենք իսկ դիպլոմատները և նրանց հետ՝ հայութեան բարեկամները։ Այդպէս ենք քարոզել մենք ևս—հազարաւոր ձևերով—մեր ամբողջ կուսակցական գոյութեան ընթացքում, Սահմանադրութիւնից առաջ և յետոյ... Բայց քանի՞սն են ըմբռնել այդ մաշուած ու հետևակ ճշմարտութիւնը։ Զե՞նք կրկնում արդեօք 1878-ի աղէտաւոր դրաման։ Զե՞նք արդեօք հետապնդում նոյն „փայտե շերեփով", նոյն ունայն աղերսանքով մեր արդար իրաւունքի կիրառութեան։ Զե՞նք արդեօք մոռանում հոգսերից ամենաէականը, պարտքերից ամենամեծը և ամենահրամայականը...

Եւ ո՞ւր է ազգային համերաշխութիւնը, որ քանիցս շեշտեցին ու դրատեցին մամուլի մէջ... այն գործօն միաբանութիւնը, որ աջողութեան գրաւականն է...

Հայկական համերաշխութիւնը իրագործուած է միայն ու միայն դիւանագիտական ձեռնարկների ու թղթերի շուրջ...

Այդ էլ բան է, կ'ասեն ոմանք։ Շա՞տ քիչ բան է—կ'ասենք մենք—և այդ կիսատ, հիւանդոտ, կրաւորական համերաշխութիւնը արդէն իսկ ողբալի մի նշան է քաղաքական անչափահասութեան և թերևս նախօրօք դատապարտուած վիժուած...

Հայ բուրժուազիան, թեևաւորուած մի քանի դահլիճների վերապահոտ խոստումներից, հրապարակ է հանել մարդիկ ու ծրագիրներ, ուրուագծել է մի քանի ձեռնարկներ այս ու այն մայրաքաղաքում և յոյս ունի (ունի՞ արդեօք), որ հայոց ռէֆորմները պիտի իջնեն մանանայի պէս դիւանագիտական երկնքից։

Դիւրին բան... գործելու աժանագին ճանապարհ, որ չի բնաւ հարուածում գրպանին, չի պահանջում առանձին զոհողութիւն. բայց փորձեցէք խօսելու այդ ազգասէր պարոններին, այդ հարուստ, պերճանքի մէջ խեղդուող գաղութներին՝ երկրի, ժողովրդի ամենահրատապ ցաւերի մասին, փորձեցէք հասկացնելու այդ անզգայ, մամօնապաշտ հոգիներին, որ ժողովուրդը կարօտ է ինքնապաշտպանութեան միջոցների, որ առանց դրան՝ բոլոր ազգաշէն ծրագիրները աւազի վրայ կառուցուածքներ են... Ապարդի՞ւն։ Փորքաթիւ, անհատական բացառութիւններով, հայ ունևոր դասակարգը, ազգի պաշտպան, խնամակալ դասակարգը, նոյն քարացած և եսապաշտ գոյութիւնն է, ինչ որ նախնի օրերում։ Ոչ մի նշան մխիթարական, գրեթէ ոչ մի յառաջդիմութիւն 1878-ի օրերից ի վեր...

Մենք չենք, որ պիտի ժխտենք „դիւանագիտական միջոցների" օգտակարութիւնն ու այժմէութիւնը։ Նրանք ոչ միայն օգտակար են, այլ և անհրաժեշտ։

Անհրաժեշտ են, բայց բաւակա՞ն չեն։ Նրանք չեն տալիս պատասխանը մեծ, ահաւոր հարցումի. ի՞նչ կը լինի հայ ժողովրդի վիճակը վաղը, երբ այդ բոլոր դիւանագիտական ձեռնարկները կը վիժին, խաղաղ լուծման երազները կը խորտակուին և դժբախտ հայաստանցին կը մնայ նորէն մատնուած արիւնարբու հրոսակներին ու անխիղճ հայաջինջ պաշտօնէութեան...

Ի՞նչ կը լինի այդ ժողովրդի վիճակը, եթէ առաջիկայ գարնան, ընդհանուր վերիվայրումի ահեղագոյն վայրկեանին, մարդասպան խաժամուժը, ծգտելով տիրապե-

տող քաօսից, կենտրօնական կառավարութեան թուլութիւնից, անէացումից, կամ թէ նոյնիսկ այդ կառավարութեան աջակցութեամբ, խրախուսանքով՝ փորձէ վերստին յագուրդ տալ վրէժխնդրութեան ու աւերածի իր վայրագ բնազդներին...

Ի՞նչ... *That is the question!* Այդ է ֆատալ, չարագուշակ, սարսափելի խնդիրը, բոլոր խնդիրների խնդիրը։ Այդտեղ է, որ չարաչար կաղում է մեր ազգային համերաշխութիւնը, մեր կամքերի ու ջանքերի անհրաժեշտ ներդաշնակութիւնը։ Այդտեղ է, որ հայ մարտիկը, կռուող ժողովրդի թև ու թիկունք ֆէդային, ողբում է իր ցեղակից և ունևոր դասակարգերի անիծակուռ ռուտինը, նրանց դաժան անտարբերութիւնը և քաղաքական *sens*-ի լիակատար բացակայութիւնը...

***

Պրոպագանդը Եւրոպայում ցանկալի է, դիմումները, ծրագիրներն ու օրգաններն անհրաժեշտ—և իւրաքանչիւր հայ անհատ ու խմբում պարտաւոր է իր բաժին աջակցութիւնը բերելու գործի գլուխ կանգնած, ղեկավարող անհատներին ու օրգաններին։ Սակայն... նախ և առաջ՝ ներելի է ցանկալ, որ կաթողիկոսական պատգամաւորութիւնը կանգնած մնայ իր կոչման բարձրութեան վրայ, որ նա խնդրի լիակատար ծանօթութեամբ և ինքնուրոյն, հաւաքաբար առաջ տանէ իր փափուկ, պատասխանատու պաշտօնը, ներկայացնէ եւրոպական արէօպագին հայ ժողովրդի իրական պահանջները։ Ներելի է, մանաւանդ, ցանկալ, որ Դուռը իր հայազգի արբանեակներով չփորձէ իր ապականող ազդեցութիւնը տարածել հայկական պատգամաւորութեան և նրա անելիք քայլերի վրայ...

Այդ ևս կացութեան վտանգներից մինն է։ Նուրիներն ու Արթինները անպակաս են Բ. Դրան մթնոլորտում ամեն անգամ, երբ օսմանեան կառավարութիւնը յղացել է հակահայ ծրագիրներ կամ փորձել է ի դերև հանելու այս կամ այն հայանպաստ ծրագիրը, թող փչելու Եւրոպայի աչքերին իր ուրոյն „ռէֆօրմային ծրագիրներով“, իր „ընդարձակ բարեկարգմանց“ հաւաստիքներով—գրեթէ միշտ նա ունեցել է իր տրամադրութեան տակ՝ սիրայօժար, հաւատարիմ հայ ծառաներ, որոնց և հրապարակ է նետել նեղն ընկած պարագային։ Երէկ արդէն մենք տեսանք այդ ծառաների թատերամուտը սադրազամի կաբինէում, ուր նրանք կանչուել էին—ո՞ւմ արդեօք յանձնարարութեամբ — իրենց „հեղինակաւոր“ կարծիքները յայտնելու Հայաստանի բարեկարգութեան մասին։

Բայց ամենէն ազդեցիկը և թերևս ամենէն վստահելին այդ հայատիպ ծառաներից՝ գտնւում է նոյնիսկ կառավարութեան մէջ, վարում է արտաքին գործոց նախարարի պաշտօնը. նրա հետ է, որ Քեամիլը խորհրդակցում է Հայաստանի վիճակի մասին, նրա ձեռքն է, որ պիտի տրւի և վաղւան ռէֆօրմների ծրագիրը։

Այդ մարդը — որի խիղճը նոյնքան առաձգական է, որքան իր մտաւոր կարողութիւնները սահմանափակ — դառնում է հետզհետէ մի անախորժ բեռ հայութեան խղճմտանքի վրայ։ Նա բնաւ տաղտուկ ու անպատեհութիւն չզգաց, ըստ երևոյթին, իր մինիստրական դերի մէջ, անգամ վերջին տագնապալի ամիսներում, երբ ամեն օր սուրհանդակը բերում էր Հայաստանից քրդական նախճիրների արիւնոտ մանրամասներ և կառավարական մեղսակցութեան բացայայտ ապացոյցներ։ Նա եկել էր դիւանագիտական իր մեծահռչակ կարողութիւններով փրկելու Ցաճկաստանը (եւրոպական թիւրքիան կորցնելուց յետոյ՝ այժմ, անշուշտ, պիտի ջանայ պահելու ասիականը), բայց ամենից առաջ փրկել կուզէ իր սեփական պաշտօնը, որին նա կառչել է յամառաբար, ինչպէս գռեհիկ մակաբոյծը կենդանական օրգանիզմին... Դիւանագէտի լուսապսակը չքացաւ և Նրա տակ եւրոպական հասարակութիւնը տեսաւ միայն արևելցի մի փոքրիկ *chicaneur—plus turc que le turc*—որ անընդհատ պրովոկասիոններով ու վրիպումներով գրգռեց յոյնին, սերբին, բուլգարին և ի վերջոյ զզւանք յարուցեց անգամ իր նախկին երկրպագուների շարքերում։ Իր ձախողակ կարիերի մէջ՝ Նորատունկեան էֆէնտին պիտի կամենայ, անտարակոյս, նաև „ազգի փրկիչ“ լինել, տարածել իր ազդեցութիւնը անգամ դրսի գործիչների վրայ, լուծել տալ հայոց հարցը, ինչպէս իրեն է հաճելի և իր տիրոջ—Քեամիլին։

Առաջին փորձն եղաւ այդպիսի լուծման—և վրիպեց։ Ամբողջ հայութիւնը իր ցասկոտ արհամարհանքը միայն յայտնեց օսմանեան դահլիճի բարեկարգական խաբէութիւններին։ Նոյն վիճակին կ՚արժանանան բոլոր նման փորձերը։ Բաւակա՞ն է, որքան ազգը տառապել է անցեալի մէջ արիւնակից ստրկամիտ, շահախնդիր պաշտօնեաներից։ Մենք չենք թոյլ տայ, որ նրանք նորէն հրապարակ գան իրենց յոռի ազդեցութիւններով։ Եթէ հայկական խնդիրը այս անգամ էլ պիտի թաղւի, ապա գէթ խոյս պիտի տանք հայ տարրը այդ թաղմանը մասնակից անելու աղէտաւոր հեռապատկերից...

***

Անկախ, շիտակ և աշխուրջ գործունէութիւն, առանց ենթարկւելու վտանգաւոր ներշնչումների — այսպէս է լինելու Եւրոպայի հայկական պատգամաւորութեան բնոյթը և ընթացքը։

Եւրոպական այդ անհրաժեշտ աշխատանքի հետ զուգընթաց պէտք է երթայ երկրի ներքին աշխատանքը, այն՝ որ պէտք է օրինական միջոցներով ապահովէ հայ գիւղացու կեանքն ու պատիւը, բարձրացնէ ժողովրդի դիմադրական կարողութիւնը՝ հանդէպ քրդական յարձակման սպառնալիքների։ Հեռո՛ւ մնանք պատրանքներից,

չափազանցրած ու վարդագոյն յոյսերից, խաբէական ծանուցումներով չյուսադրենք ժողովրդին, չչլատենք նրա փրկարար ինքնօգնութիւնը ստախօս հեռագիրներով թէ իբր արդէն խնդիրը լուծման ճամբու վրայ է, թէ այս ինչ կամ այն ինչ պետութիւնը խոստացել է պաշտօնապէս յարուցանել այն՝ դեսպանական ժողովի մէջ... Ցարաբախտաբար, չկայ դեռ այդ որոշումը և ոչ մէկ պետութեան կողմից, ամեն ինչ տակաւին անորոշութիւն է և պատրանք, որից գուցէ ապագայում կը ժայթքի ուրախարիթ ու կազդուրիչ իրականութիւնը... Առ այժմ խօսքը դեռ քրդին է, որ ռուսական սահմաններից մինչև Շատախ ու Սասուն ճօճում է իր մարդաջինջ դաշոյնը, բառբառում է նոյնիսկ — ինչ որ խորհրդաւոր թելադրութեամբ, արտաքին ներշնչումով — „ավտօնօմ, ինքնավար Քիւրդիստանի“ մասին և ցոյց տալիս բռունցքը իր հարևան „Ֆլա“-ին... Վերջին մի շարք դիմադրական փորձերը հայերի կողմից — մի քանիսը հերոսական և ջախջախիչ — աւելի ևս մտածել են տալիս այդ բարբարոս հորդաներին, որոնք քաջ են միայն անզէն ու անպաշտպան զոհերի հանդէպ...

Այս ծանր օրերի մէջ ազգի բոլոր տարրերը — իրական, գործօն համերաշխութեամբ — պէտք է որ համախմբուէին մարտական կազմակերպութեան շուրջը, աճեցնէին նրա վարկն ու հմայքը և նրա հետ միասին սիրտ տային յուսակտուր ժողովրդին, ներշնչէին վստահութիւն ու կորով... Այդպէս է լինում շատ թէ քիչ ինքնաճանաչ, քաղաքակիրթ համայնքների մէջ։ Մեզ մօտ — հակառակն է։ Քարոզելով հանդերձ համերաշխ գործակցութիւն խաղաղ, անվնաս ձեռնարկների ու ցոյցերի մէջ — մի կարգ մարդիկ շարունակում են իրենց քինոտ արշաւանքը կազմակերպութեան դէմ և նոյնիսկ... ցնծութեան ծափ են զարկում ինքնապաշտպանութեան այս կամ այն ծրագրի վիժման առիթով... Ուրիշները խնամքով ու եռանդով նկարագրում են երկրի մէջ կատարուող դիմադրական ճիգերը, մատնում են ռուսահայ անհատներին կառավարական ուշադրութեան, ներկայացնում են ինքնապաշտպան խմբերի առաջնորդներին, որպէս մի-մի Լանկ-Թամուրներ, որ նպատակ ունին կոտորելու, կործանելու ժողովուրդը... Կարդացէք այն անլուր աղտեղութիւնները, որ հրատարակել էր վերջերս Ամերիկայի մի անպատիւ հայ օրգան... Դաւաճանի և մատնիչի ոճրանիւթ ուղեղը չէր կարող — ներկայ փափուկ, պատասխանատու օրերում — աւելի զգէր շահատակութիւններ յղանալ... Սարսափելի է, որ այդ տեսակ գարշանքներ տպագրւում են և արտատպւում, շրջան անում մի յայտնի մամուլի մէջ։ Աւելի ևս սարսափելի է, որ տպագրելուց յետոյ՝ նրանք չեն յարուցանում զզւանքի ու ցասման փոթորիկ...

ԹԻՒՐՔԻԱ

ՌԷՖՕՐՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ՕՍՄԱՆԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՆՈՐՈԳՄԱՆՑ ՆԻԱԶԱԳՈՅՆ ԾՐԱԳԻՐ, ՆԵՐԿԱՅԱՑԻԱԾ 1901 ՍԵՊՏ. 13-ԻՆ ՖՐԱՆՍԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐ Պ. ԴԷԼԿԱՍԷԻ՝ ՁԵՌԱՄԲ Պ. ՊԻԷՌՔԻՅԱՌԻ, ՅԱՆՈՒՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ.

1) Նւազեցում վիլայէթներու թւին (վերահաստատում հին սահմաններուն)։

Տես.—11 մայիս 1895-ի Յիշատակագիրը *)։

2) Եւրոպական չէզոք ազգութեան մը պատկանող ընդհանուր կառավարիչ մը պիտի հաստատի հինգ տարուան ժամանակամիջոցի մը համար, հաւանութեամբը մեծ պետութեանց։ Այս ընդհանուր կառավարիչը պիտի վայելէ գործադիր իշխանութեան բոլոր իրաւասութիւնները։ Պիտի հսկէ հանրային ապահովութեան ու կարգին պահպանման։ Պիտի գանձէ հարկերը, իր պատասխանատուութեան տակ պիտի նշանակէ վարչային պաշտօնեաները։ Պիտի հաստատէ դատաւորները և գործադրել տայ անոնց վճիռները։ Առանձնապէս հոգ պիտի տանի խաղաղ աշխատանքին զարգացման և ճարտարարուեստին և հողագործութեան կատարելագործման։ Ընդհն. կառավարիչը կարող է պաշտօնանկ ըլլալ պետութեանց համաձայնութեամբը միայն։ Իր բնակավայրը պիտի ըլլայ հայկական նահանգներու կարևոր կեդրոններէն մէկը։

Տես. — Կազմակերպական կանոնագիր Լիբանանի,

---

*) Մայիսեան յիշատակագիրը հետևեալ կերպով կ'արտայայտուի այս մասին.—Տրուած ըլլալով, որ բարենորոգումները պիտի գործադրուին Էրզրումի, Պիթլիսի, Վանի, Սվազի, Մամուրէթ իւլ Ազիզի և Տիարպէքիրի վեց վիլայէթներուն մէջ, պէտք է քննել այս նահանգներու թւին նւազեցման խնդիրը։ Նոր բաժանումը մը թոյլ տալով որոշ խնայողութիւն ձեռք բերել վարչական ընդհանուր ծախքերուն մէջ թերևս դիւրացնէր վայրերու ընտրութիւնը պակասեցնելով անոնց թիւը և ուժեղացնէր անոնց հեղինակութիւնը բարելաւելով անոնց նիւթական կացութիւնը։ Այս նոր բաժանումը պէտք է կատարուի այնպիսի ձևով մը, որ ժողովուրդները իրաքանչիւր նահանգի վարչային զանազան միութեանց մէջ բաժանուած ըլլան ազգագրական տեսակէտով հնարաւոր եղածին չափ միատարր համախմբումներու։

ԾԱՆՕԹ. — 1885-էն առաջ 10 տարի Էրզրումի էյալէթը կը պարունակէր Զրլտրի, Դարսայ եւ Էրզրումի (այժմու վիլայէթը) շրջանները, ինչպէս նաեւ Վանը իր մէջ ունենալով Հէրքեարին, Պիթլիսը եւ Մուշը։ Այս էյալէթը յետոյ բաժանուեցաւ 5 վիլայէթներու։ 1877-ի պատերազմէն ետը այս հողաբաժնին Թիւրքիոյ մնացած մասը բաժնուեցաւ 4 վիլայէթներու. — Էրզրում, Վան, Հէրքեարի, Մուշ։ Անկից յետոյ Հէրքեարիի շրջանը միացուեցաւ Վանայ վիլայէթին, իսկ Մշոյ շրջանը Պիթլիսի վիլայէթին, որ նոր ստեղծուեցաւ։ Աւելի ետը Մամուրէթ իւլ Ազիզի սանճակը՝ միացմամբը մէկ քանի յարակից հողամասերուն, դարձաւ վիլայէթ մը, իսկ Տէրսիմի վիլայէթը եղաւ անոր մէկ սանճակը

Կազմակերպական կանոնագիր Ռումելիի, Դեղին դիրք (Հայկական գործեր) 1897 թիւ 48, 49, 51, 52, 53, 55, Ցիշատակագիր 11 մայիս 1895-ի։

3) Ընդհանուր կառավարիչին քով պիտի հաստատի ընդհանուր ժողով մը, ընտրուած հետևեալ կերպով.— իւրաքանչիւր գաղա (գաւառակ) պիտի ուղարկէ մէկ իսլամ մէկ քրիստոնեայ երկու պատգամաւոր սանճագին (գաւառ) գլխաւոր քաղաքը, ուր պիտի ընտրուին երկու խորհրդականներ մէկը իսլամ միւսը քրիստոնեայ։ Ընդհանուր ժողովը պիտի գումարուի տարին անգամ մը. իր գործը պիտի ըլլայ քննել հանրային օգտակարութիւն ներկայացնող աշխատանքներու վերաբերեալ խնդիրները, ինչպէս հաղորդակցութեան միջոցներու զարգացում, վարչական սնտուկներու կազմութիւն և այն ամենը, որ կրնայ ծառայել նպաստելու հանրային կրթութեան, հողագործութեան, վաճառականութեան և ճարտարարուեստին։ Ընդհանուր ժողովը պիտի բաժանէ նաև հարկերը և հակակշռ (controle) հասոյթներու և ծախսերու յանձնաձնումը։ Իր մէջէն պիտի կազմէ մնայուն խորհուրդ մը օժանդակելու համար ընդհ. կառավարչին՝ ժողովին չգումարուած ատենները։

Վեց վիլայէթներու պիտաճէն պիտի կազմի հինգ տարուան ժամանակամիջոցի մը համար, հասոյթներու միջինին հիման վրայ ընդհ. ժողովին կողմէ, համաձայնութեամբ ընդհ. կառավարչին։ Եկամուտները պիտի յատկացուին նախ տեղական պէտքերու գոհացման և աւելցածը պիտի ղրկի կեդրոնական կառավարութեան։

Տես. — Կազմակերպական կանոնագիր Լիբանանի, Կազմակերպական կանոնագիր 1868-ի Կրէտէ կղզիին, Կազմակերպական կանոնագիր Արևելեան Ռումելիի, Ցիշատակագիր 11 մայիս 1895-ի։

4) Վալիները, մութէսարիֆները, գայմագամները ևն իբրև օժանդակ պիտի ունենան վարչական խորհուրդներ, ընտրուած ժողովուրդէն։

Տես.—Ցիշատակագիր 11 մայիս 1895-ի։

5) Եւրոպական մնայուն յանձնաժողով մը պիտի հիմնի պետութեանց կողմէ բարենորոգումները հաստատելու և անոնց գործադրութեանն հսկելու համար։ Այս յանձնաժողովը դեսպաններուն միջոցաւ պիտի ծառայէ իբրև միջնորդ մէկ կողմէն ժողովուրդին ու տեղական վարչութեան, միւս կողմէ այս վերջինին և կայսերական կառավարութեան միջև։

Տես.—Դեսպանաժողովներ Պոլսոյ և Ֆիլիպէի, Ցիշատակագիր 11 մայիս 1895-ի։

6) Ն. Վ. Սուլթանը ընդհանուր ամբողջական ներում պիտի շնորհէ քաղաքական գործերու համար դատապարտուած կամ ամբաստանուած հայերուն։

7) Բոլոր հայերը ինչ կրօնի ալ որ պատկանին, որ առանց դատավարութեան աքսորուած էին, ըլլայ օսմանեան կայսրութեան հողերէն դուրս, ըլլայ իրենց բնակած նահանգներէն դուրս և կամ որ դէպքերու երկիւղէն կամ թշուառութենէ մղած պարտաւորուած էին արտասահման գաղթել, պիտի կրնան ազատօրէն վերադառնալ Թիւրքիա կամ այն նահանգները, ուսկից եկած էին, առանց անհանգստութիւններու ենթարկուելու տեղական իշխանութեանց կողմէ և վերստին պիտի տիրանան մեկնելէ առաջ իրենց ունեցած ստացուածքներուն։

Տես.—Ցիշատակագիր 11 մայիս 1895-ի։

8) Այն հայերը, որոնք ձնասած են ըլլայ իրենց անձի, ըլլայ ստացուածքի տեսակէտով, պիտի ստանան պատշաճ հատուցում և բաւականութիւն։

Տես.—Ցիշատակագիր 11 մայիս 1895-ի։

9) Բոլոր յետնեալ տուրքերը պիտի ջնջուին։ 10 տարի տուրքերը պիտի յատկացուին միայն տեղական պէտքերու։

Տես.—Կարգադրութիւն Զէյթունի գործին, Դեղին դիրք, թիւ 94։

10) Բ. Դուռը պիտի հսկէ, որպէս զի կրօնափոխութիւնները առարկայ ըլլան 1856-ի Խատտը Հիւմայունով (յօդ. 10, 11, 12) հաստատուած սկզբունքներէ բղխող երաշխաւորութեանց, որոնք գործնականին մէջ յաճախ անտես են առնուած։ Կրօնափոխ ըլլալ ցանկացող անձնաւորութիւնները պէտք է ըլլան չափահաս և իրենց կրօնի փոփոխութեան յայտարարութիւնը ընելու պիտի արտօնուին շաբաթուան մը պայմանաժամ յետոյ, որու միջոցին պիտի ենթարկուին իրենց կրօնական պետին հսկողութեան։

Տես.—Ցիշատակագիր 11 մայիս 1895-ի։

11) Բ. Դուռը յատուկ հրահանգներ պիտի տայ իշխանութեանց, որպէս զի էկրկնուին ոտնձգութիւններ հայ կղերին և հասարակութեան այն իրաւունքներուն ու առանձնաշնորհումներուն դէմ, որոնք կը բղխին 1863-ի սահմանադրութենէն (կազմակերպական օրէնք հայոց) և սուլթաններէն պարգևուած պերատներով։

Տես.—Ցիշատակագիր 11 մայիս 1895-ի։

12) Ասիական Թիւրքիոյ միւս այն վիլայէթներուն մէջ, ուր որոշ սանջակներու հայ ժողովուրդը ընդհանուր բնակչութեան կարևոր մէկ մասը կը կազմէ, վալիի կողքին պիտի նշանակուի մասնաւոր քրիստոնեայ պաշտօնեայ մը հայոց շահերով զբաղուելու համար։ Այս պաշտօնեան պիտի ընդունի հայ ժողովրդին աղերսները և զանոնք պիտի հաղորդէ վալիին, որ հաճայնութեամբ նոյն պաշտօնեային պիտի տայ այդ աղերսներուն պէտք եղած հետևանքը։

Բացի այդ՝ այս պաշտօնեան կանոնաւորաբար տեղեկագրեր պիտի ուղղէ Պոլսոյ հակակշռող մնայուն յանձնաժողովին։ Այս վիլայէթներուն մէջ, ուր որոշ տեղեր հայերը բնակչութեան մեծամասնութիւնը կը կազմեն, վարչային արդի բաժանումը պիտի փոփոխուի և նահիէներու (գիւղախումբ) կազմութեան վերաբերեալ բարենորոգութեանց ծրագրին տրամադրութիւնները պիտի գործադրուին այդպիսով իբրև առանձին վարչական միութիւններ ընդունուած տեղերուն մէջ։

Տես.—Ցիշատակագիր 11 մայիս 1895-ի։

13) Ներքին կարգը պիտի պահպանեն ոստիկանութիւնը ոստիկան զինուորութիւնը (gendarmerie) և տեղական քաղաքապահ զինուորութիւնը (milice), առանց ցեղի ու կրօնի խտրութեան, կազմակերպուած եւրոպացի սպաներէ և անոնց հրամանատարութեան տակ։

Տես. — Կազմակերպական կանոնագիր Լիբանանի, Կազմակերպական կանոնագիր Արևելեան Ռումելիի, Պերլինի դաշնագիր յօդ. 15։

14) Զէնք կրելու մասին խստօրէն միակերպ կանոնագիր մը ի գործ պիտի դրուի ամբողջ ժողովրդին համար, առանց ցեղի և կրօնի խտրութեան։

Զինուորական տուրքը (պէտէլը ասկերի) պիտի ջնջուի ոչ-իսլամներուն համար. քաղաքապահ զինուորութեան մէջ ծառայութիւնը պարտաւորիչ պիտի ըլլայ բոլոր տեղացիներուն համար։

15) Համիդիէ զօրքը պիտի արձակուի և քիւրդերը միւս օսմանեան հպատակներուն պէս պարտաւոր պիտի ըլլան կատարելու կանոնաւոր զինուորական ծառայութիւն։

Տես.—Ցիշատակագիր 11 մայիս 1895-ի։

16) Դատական բարենորոգումներ 11 մայիսի բարենորոգութեանց ծրագրին մէջ ցոյց տրուած սկզբունքներուն համեմատ *)։

17) Ազատութիւն հաւաքումներու, հանրային կրթութեան և մամուլի։

---

*) 11 մայիսի բարենորոգմանց ծրագրին արդարութեան վերաբերեալ մասը, որ կը կազմէ նոյն ծրագրին 87-րդ գլուխը, կը բաղկանայ հետևեալ յօդուածներէն.—

Յօդուած 29.—Նահիյէի (գիւղախումբ) իւրաքանչիւր տեղւոյն մէջ գոյութիւն պիտի ունենայ ծերերու խորհուրդ մը մուխտարին նախագահութեան տակ, որուն պաշտօնը պիտի ըլլայ նոյն տեղւոյն բնակիչներուն մէջև ծագած վէճերը կարգադրել բարեկամօրէն։

Յօդ. 30.—Իւրաքանչիւր գազայի (գաւառակ) մէջ գոյութիւն պիտի ունենայ համեմատօրէն նահիյէներու թիւին բաւականաչափ թիւով հաշտարար դատաւորներ (juges de paix), նշանակուած դատական նախարարին կողմէ, համաձայն վալիին ցուցմունքին։ Այդ հաշտարար դատաւորներէն մէկը անպատճառ պիտի բնակի գազային գլխաւոր քաղաքին մէջ։ Գազայի մը հաշտարար դատաւորներու մէկ երրորդը քրիստոնեայ պիտի ըլլայ։ Քրիստոնեայ հաշտարար դատաւորները պիտի հաստատուին այն կեդրոններուն մէջ, ուր քրիստոնեայ ազգաբնակութիւնը մեծագոյն թիւը կը կազմէ։

Յօդ. 31.—Հաշտարար դատաւորը պիտի զբաղի ա) Դատական խնդիրներու մէջ առանց վերաքննութեան այն օրինազանցութիւններով (contravention), որոնք ենթակայ են հնգապարակ ոստիկանական պատիժներու և վերաքննութեան պարագային այն յանցանքներով (délit), որոնք ենթակայ են ամենաշատը 500 ղրուշ տուգանքի և 3 ամսեայ բանտարկութեան. բ) Քաղաքային խնդիրներու մէջ առանց վերաքննութեան մինչև 1000 ղրուշնոց անհատական, քաղաքային և առևտրական դատերով, իսկ վերաքննութեան պարագային մինչև 5000 ղրուշնոց նոյնօրինակ դատերով։

Յօդ. 32. — Հաշտարար դատաւորը պիտի կայցնէ նաև հաշտութեան դատարան։ Պիտի կրնայ, վիճող կողմերու խնդրանքին վրայ իրաւարարներ (arbitre) նշանակել կարգադրելու համար այնպիսի վէճերը, որոնց առարկան 5000 ղրուշէն աւելի է։ Իրաւարարական վճիռի մը արձակելու պարագային, վիճող կողմերը պիտի հրաժարին վերաքննութենէ։

Յօդ. 33.—Ցրուած ըլլալով, որ հաշտարար դատաւորները գաւառներուն մէջ դատարանի տեղ կը բռնեն իրենց որոշումներու վերաքննութիւնը, քաղաքային խնդիրներու մէջ տեղի պիտի ունենայ սանճագի դատարանին առջև։

Յօդ. 34.—Հաշտարար դատաւորներուն կողմէ ըստ իրենց իրաւասութեան արտասանուած բանտարկութեան դատապարտութիւնները պիտի գործադրուին գաւային բանտին մէջ։ Մուտիրները հաշտարար դատաւորներուն պիտի օժանդակեն թէ քաղաքային թէ պատժական վճիռներու գործադրութեան մէջ։

Յօդ. 35.—Գաւայի դատարանները ջնջուած ըլլալով, սանջագի դատարանները պիտի զբաղին 5000 ղրուշէ աւելի գումարներու վերաբերող քաղաքային գործերով և քաղաքային խնդիրներու մասին հաշտարար դատաւորներու որոշումներու վերաքննութեամբը։ Սանճագի դատարանները պիտի ունենան միմիայն քաղաքային ատեան (chambre civile), իսկ պատժական ատեանին տեղ գոյութիւն պիտի ունենան շրջուն ոճրագատ ատեանները (cour d'assises)։ Սանճագի դատարանները պիտի կազմուին նախագահէ մը, որ պիտի ըլլայ վկա, եալ դատաւոր մը, նշանակուած դատական նախարարին կողմէ և երկու անդամներէ, որոնք պիտի ընտրուին վալիին կողմէ սանճագներու խորհուրդներուն պատրաստած ցանկին վրայէն։

Յօդ. 36.—Այսպէս սանճագներու դատարաններուն պատժական ճիւղերուն տեղ պիտի հաստատուին շրջուն ոճրագատ ատեաններ։ Ասոնք պիտի ունենան նախագահ դատաւոր մը վիլայէթին բարձրագոյն ատեանին անդամներէն առնուած և անոր պիտի միացուին երկու անդամներ, մէկը իսլամ մէկը քրիստոնեայ, նշանակուած վերաքննիչ ատեանին կողմէ սանճագին հաշտարար դատաւորներուն մէջէն։ Այս հաշտարար դատաւորները մասնաւոր հատուցում մը պիտի ստանան ոճրագատ ատեանի շրջանի միջոցին։

Յօդ. 37. — Ոճրագատ ատեանը նիստ պիտի գումարէ կարգաւ այն բոլոր գաւառներու մէջ ընդ որս և վիլայէթին գլխաւոր քաղաքը և սանճագներու գլխաւոր քաղաքները, ուր իր ներկայութիւնը անհրաժեշտ կը նկատուի։ Այս ատեանը պիտի զբաղի վերաքննելով հաշտարար դատաւորներու որոշումները յանցանքներու մասին, իսկ առանց վերաքննութեան այն ոճիրներով ու յանցանքներով, որոնք ենթակայ են 5000 ղրուշէ աւելի տուգանքի և 8 ամսէ աւելի բանտարկութեան։

Ոճրական խնդիրներու մէջ ոճրագատ ատեանի կողմէ արուած վճիռները կրնան ենթարկուիլ միայն վճռաբեկ ատեանին։

Յօդ. 38.—Ոճրագատ ատեանի նախագահը գաւան հասնելով, պիտի պահանջէ հարցաքննիչ դատաւորէն մէկ ցանկը տեսնուած այն դատերուն, որոնք կրնան անմիջապէս ներկայացուել իրեն և ցանկ մը ալ այն դատերուն, որոնք տեսնելու վրայ են։ Եթէ այս վերջիններու մասին հաստատէ որևէ անկանոնութիւն կամ՝ անարդարանալի ուշացումներ, անմիջապէս տեղեկագիր մը պիտի ուղղէ դատական նախարարութեան։

Ոճրագործ ատեանի անդամները դաղան եկած և անկից մեկնած ժամանակ, պիտի այցելեն բանտերը, պիտի տեղեկանան բանտարկեալներու կացութեան և արձանագրութեան տեսարները պիտի ստուգեն։

Յօդ. 39.—Վիլայէթի բարձրագոյն ատեանը պիտի բաղկանայ նախագահէ մը և բաւականաչափ թիւով ատեաններէ, զբաղելու համար ներկայացած քաղաքային գործերով և հայթայթելու համար նախագահներ շրջուն ոճրագործ ատեաններուն։ Այս բարձրագոյն ատեանը պիտի պաշտօնավարէ քաղաքային խնդիրներու մէջ իբրև վերաքննիչ ատեան, իսկ պատժական խնդիրներու մէջ, իբրև ոճրագործ ատեան։ Իր կազմութիւնը օրինաւոր է, երբ ներկայ են նախագահը և երկու անդամներ։ Բացի այդ, այս ատեանը կը պարունակէ նաև ընդհանուր դատախազ մը և բաւականաչափ թիւով փոխանորդներ։

Յօդ. 40.—Հաշտարար դատաւորներու որոշումները, ինչպէս նաև ամէն կարգի դատարաններու վճիռները պիտի գրուին թիւրքերէն լեզուով։ Թիւրքերէն բնագրին, ըստ տեղւոյն և դատի մէջ եղող կողմերուն, պիտի կցի անոր հայերէն լեզուով մեկ թարգմանութիւնը։

ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻՆ

Բաւական ժամանակից ի վեր՝ ամենօրեայ միմեանց յաջորդող դէպքերը, կարելի է ասել, մի առանձին նորութիւն չէին բերուս,—նրանք գրեթէ նորմալ կերպով շարայարող մի շղթայի օղակներն էին։

Պարլամենտի ցրումից ու ընտրութիւններից յետոյ Իթթիհատի մենատիրութենէն և այդ մենատիրութիւնը ապահովելու համար միջոցների մէջ խտրութիւն չդնող մտայնութիւնէն ուրիշ բան չէր սպասուէր։ Ուստի և այդ շղթայի ամեն մի օղակով առանձնապէս զբաղուելով, մի նոր միտք արտայայտած չպիտի լինէինք։

Ընտրութիւններից շատ առաջ, Դաշնակցութեան Իթթիհատին մօտ բարեկամ համարուած ժամանակներումն էլ, իմ հրապարակ գրած և միշտ տրամաբանօրէն անխախտ պահած կարծիքը այս էր։

— Հաստատելով և ուժգնօրէն քննադատելով հանդերձ Իթթիհատի ձախող քաղաքականութիւնը կամ աշխարհավարումը, առիչգոյէ կազմակերպուած լաւագոյն տարրի, նրա հեժեմօնին ընդունել եմ միշտ, իբրև անխուսափելի, գերադասելի ու տանելի չարիք, գէթ իրաց դրութիւնը պահելու, աւելի աղէտաբեր ռէակսիօնի տեղի չտալու համար, մինչև որ լաւագոյն տարրերը կազմակերպուին և հակադիր կամ փոխարինող ուժ կազմեն։

Ես չափազանց սկեպտիկ եմ եղել Երկրի ճակատագիրը կարենալ վարելու, փրկելու քաղաքական-ընկերային կազմակերպուած ուժ հրապարակ գալու վերաբերմամբ։

Թիւրքիոյ մէջ ամենից շատ են զբաղուում նոյնիսկ մասսաները քաղաքականութիւնով, բայց հիմնական համոզում, համոզմունքի պաշտպանութեան ջիղ, քաղաքացիական արիութիւն և զոհաբերութիւն բացակայում է։

Տիրող տարրերի մէջ ո՛չ մի կուսակցութիւն ուժ և հեղինակութիւն չի՛ ներկայացնի՝ եթէ բանակը յենարան չունի, որովհետև քիչ ու շատ քաղաքացիական ջիղն ու առաքինութիւնը, յեղափոխական իսկական՝ բայց չզարգացած ոգին զինուորական տարրի մէջ է ենթադրուում։

Իսկ մինչև որ այդ ոգին, այդ ջիղը, ուժը կամ հեղինակութիւնը բանակից տիրող տարրերի ոչ-զինուորական խաւերում չտարածուի, իրական բարեշրջումի կամ յեղաշրջումի հաւատք ընծայել անբնական է։

Ասել ու կրկնել եմ, որ 1908 յուլիսի 10-ը Յեղափոխութեան հետևանք չէր՝ այլ Բանակի մի մասի սպառնալիքին, պ ե տ ա կ ա ն հ ա ր ա ա ծ ի ն։

Մարտի 31-ից յետոյ Համիդի անկումն էլ Ազատարար Բանակի գործը եղաւ և ո՛չ քաղաքացիների, Յեղափոխական Կազմակերպութիւնների։

Իթթիհատը խելքի բերողն էլ Բանակը պիտի լինէր և ո՛չ ընդդիմադիր տարրերը—խօսքը տիրապետողների համար է։

Բայց Իթթիհատը և հետևաբար նրա նեցուկ Բանակի մասը իշխանութեան գլուխ լինելով, երևոյթները չէին յուսադրի, որ այդ նեցուկը հեշտութեամբ հրաժարուի իր վայելած առաւելութիւններից և լքի իր պաշտպանեալը։

Դէպքերը հակառակն ապացուցին։

Առաջ էր եկել „Զինուորական Ազատարար Լիգը“։

Թէ ի՞նչ ուժ ու համեմատութիւն էր ներկայացնում այդ Լիգը, զինուորականութեան ո՞ր խաւերում էր տարածուած, այդ մնացել է խորհրդաւոր, բայց թւում էր, որ գէթ իր մեծամասնութեամբը Իթթիհատեան շնորհներից շատ չվայելող, դժգոհներից է։

Անկասկած որ դրանց շարքումը մաս և ազդեցութիւն ունէին Ալբանական արիւնն ու ազգային ոգին։

Բայց հէնց որ Բանակի մէջ այդ շարժումը ուշադրութիւն գրաւելու, ազդելու աստիճանին հասաւ, Իթթիհատը միամտութիւն ունեցաւ Բանակը քաղաքականութիւնից հեռու պահելու ստիպող օրէնսդրական զսպող միջոցին դիմելու՝ թէև միևնոյն ժամանակ խաբուսիկ զիջումներ էլ գործ դնելով, ինչպէս Մահմուդ Շէվքէթ փաշայի հոաժարումը։

Իթթիհատի անսկզբունք տակտիկան է՝ ինք իր մէջ ամեն կամպրօմիս ընդունել՝ միայն թէ իր մենատիրութիւնը չխանգարուի, ինչպէս այդ արեց Սատրգ բէգեան հերձուածի, անցեալ տարուայ Սալոնիկեան Կոնգրէի ժամանակ։

Բանակը քաղաքականութիւնից հեռու պահելու օրէնքը ուրիշ բան չէր նշանակի՝ բայց եթէ ասել, որ Բանակը

Իթթիհատին չպիտի քննադատի, Կառավարութեան քայլերին չպիտի հետևի։

Մի՞թէ Իթթիհատը ա՛յնքան միամիտ էր, որ չ'ըմբռներ և չ'ընդունէր՝ թէ Բանակին իթթիհատական մենատիրութեան նեցուկ լինելը ինքն ըստ ինքեան Բանակին քաղաքականութեամբ զբաղուելն է։

Եւ Բանակը անկեղծօրէն քաղաքականութիւնից հեռացնելը կը նշանակի ջնջել մենատիրութեան յենարանը, որ սակայն Իթթիհատը չէր կարող կամենալ։

Նշանակալից էին այդ տեսակէտից Շէվքէթ փաշայի Ծերակոյտի առաջ արտասանած խօսքերը, երբ գնացել էր Խորհրդարանից շուտափոյթ բէէարկուած օրէնքը Ծերակոյտի առաջ էլ պաշտպանելու և բէէարկել տալու համար ու մօտաւորապէս այսպէս էր ասել. — „Այս օրէնքը բաւական չէ, կուսակցութիւններն էլ պէտք է ձեռք քաշեն Բանակը քաղաքականութեամբ զբաղեցնելուց“։

Եւ պատերազմական նախորդ նախարարը յաջորդ օրը հրաժարուեց։ Մի պարագայ՝ որ բնականաբար խորհրդաւորութեան մէջ կը թողուր, թէ նախարարը զոհուե՞ց իթթիհատական մի կօմպրօմիսի համար, թէ ստիպուեցաւ ինք տեղի տալ Ծերակոյտի առաջ իր յայտարարութեան տրամադրութիւններով։

Թիւրիմացութիւն էր պաշտպանել Բանակի քաղաքականութիւնից հեռի մնալու գաղափարը։

Թիւրիմացութիւն էր պաշտպանել՝ թէ Բանակը շարժուելու է միմիայն Սահմանադրութեան դէմ հարուած տուելու պարագայում։

Սահմանադրութեան դէմ հարուած տուելու, սահմանադրական ռէժիմը տապալելու բազմաթիւ ձևեր ու աստիճաններ կան։ Եւ մի՞թէ չէր կարելի ունենալ այն տեսակէտը, որ յանուն սահմանադրականութեան, յանուն կարգի պահպանութեան Իթթիհատեան օրէնսդրական փոփոխութիւններն ու առժամանակեայ օրէնսդրութիւնները Սահմանադրութեան դէմ հարուածներ չէին, դիկտատուրա չէին։

Եւ աւելին։ Ի՞նչ աւելի մեծ վտանգ, քան Հայրենիքի գոյութեան դէմ՝ սպառնացող վտանգը։ Եւ մի՞թէ ամեն կողմից չէր լսուում, թէ տիրող քաղաքականութիւնն ու ներքին և արտաքին բարդութիւնները Հայրենիքի գոյութեան վտանգ են սպառնում։

Բանակը ջղից ու արիւնից զուրկ պիտի լինէր այս ընդհանուր դրութեան դէմ անտարբեր հանդիսատես լինելու համար։

Օրէնքները մեռած տառ են՝ եթէ կեանքից չեն բղխում։

Կասկած չի կարող լինել, որ կօնտրօլը միայն բանակին կամ նրա մի մասին վիճակուած լինելը՝ չի երաշխաւորի լաւ ելք, փրկութիւն։

Շարժումը գոյութիւն ունէր։ Ո՛չ մի դատապարտութիւն նրան չէր կարող կասեցնել։

Շէվքէթ փաշայից յետոյ, Իթթիհատեան նախարարութեան մէջ պատերազմական նախարարութիւնը ստանձնելու համաձայնող չգտնելը, ելևմտական նախարարութիւնը երկար ժամանակ բաց թողնելու ստիպուելը, վերջապէս հարկադիր Սայիտ փաշայի դահլիճի հրաժարուելը սատրապաների նախարարութեան կազմելը— սրանք բոլորն էլ հետևանք էին այդ շարժումին և շարժումին ծնունդ եղողները իրաւունք չունին իրենց ծնողին դատապարտել։

Իթթիհատը զիջումներով, տեղատուութիւններով կարծեց ժամանակաւորապէս կասեցնել կամ սահմանափակել այդ շարժումը, բայց պարլամենտական իր մեծամասնութեան դէմ ուղղուող պահանջները նրան ղջայնացնում էին և ինքն էլ կազմակերպում էր հակադիր շարժում դարձեալ Բանակից։ Ոտնակոխում էր իր օրէնքը իր իսկ ձեռքով։

Ո՞ր պիտի յանգէին այս հակադիր շարժումները։

Դժուար էր պատասխանել։

Միայն մխիթարական յոյսը նրանում էր, որ արտաքին թշնամիի դէմ կը միանան։ Բայց դժուար էր գուշակել հաւանականութիւնը ներքին քաղաքական կուսի, որի ակտիվ բաժինը դարձեալ Բանակին էր վերապահուած երևում։

Կը տարածուէ՞ր շարժման ակտիվ մասնակցութիւնը և Բանակից դուրս, և ե՞րբ։

Հաւանական պատասխանը տալու հիմքերը պակասում էին։

Բայց այն օրը, որ Բանակով սահմանափակուած չէր լինի իրական շարժումը, այն օրը միայն պիտի սկսէր այս Երկրում իրական յեղափոխութիւնը։

Ո՞ր կողմը պիտի յաղթէր տեղի ունենալիք քաղաքական ներքին կուսի մէջ։ Պիտի կատարուէ՞ր արդեօք փրկարար յեղաշրջումը, չպիտի՞ օգտուէր արդեօք ռէակցիօնը և կամ թշնամիները ժամանակ պիտի տայի՞ն, որ ներքին կուսները վերջանան առանց վտանգի. — անվե՞րջ ու մտատանջ հարցումներ էին՝ որոնց պատասխանել անհնար էր։

Անհնար էր մանաւանդ, որ այս բազմացեղ երկրի մէջ ընդհանուր գործակցութիւն չկայ, ու տիրապետողներից և ալբանական զէն ի ձեռին կուսողներից դուրս՝ չէր երևում հաւանականութիւնը, որ Ազգային-Քաղաքական Կուսակցութիւններն էլ իրենց վճռող խօսքը ունենան, իրենց կշռող դերը ունենան։

Առանց դրան՝ մութ ու անյուսադիր էր ապագան։

Դէպքերը եկան այս յոռետեսութեան աւելին իսկ հաստատեցին։

Պատմական դարաշրջաններում և վերջին ժամանակներում մինիստրութեան ու գերիշխանութեան համար

միմեանց յաջորդող Բալկանեան ու Եգէական ծովի քաղաքական փոքրիկ Զանգուածներն ու Ազգերը առաջին անգամը լինելով գլուխ բերեցին քաղաքակրթական անհրաժեշտութիւնը. — փոքրիկ Պետութեանց կամ Բալկանեան Դաշնակցութիւնը։

Այդ Դաշնակցութիւնը զէնքի սպառնալիքով դրեց իր պահանջը Եւրոպական Թիւրքիոյ ապակենտրօնացեալ ինքնավարութեան պահանջը։

Թիւրքիան մերժեց 1880-ի բարենորոգմանց ծրագրի խաղերով։

Թիւրքիան մերժեց փոքրիկներին արհամարհելով, իր Մեծութեան յաւակնութիւններով, և հաւանականաբար Սատրազամների նախարարութեան անդամակցող և իրականապէս նախարարապետը և Անգլիոյ մարդը եղող Քեամիլ փաշայի Անգլիայից գանելիք օժանդակութեան յոյսերով։

Մինչ մի կողմից Սատրազամների նախարարութիւնը կերպարանափոխւում և նոր տարրերով աւելի ռէաքսիոնէրական գոյն էր ստանում, Համիդեան Կամարիլլան ընդհանուր ներուժով Մայրաքաղաք էր վերադառնում, աւատականութիւնը ներքին ու արտաքին դրդումներով քաջալերուած, ո՛չ-ընդհանուր՝ բայց խմբական սպանութիւնների, ալան-թալանների շարքն էր սկսում Հայաստանում, միւս կողմից Բալկանեան պատերազմն էր յայտարարուում։

Ու ի՜նչ պատրանք, ի՜նչ մերկութիւն։

Տասնեհինգ օրւայ մէջ ահռելի արագութեամբ փուլ եկան Թիւրքի վաղեմի ռազմիկի հմբաւն ու վերջի չորս տարիների մէջ վերակազմուած բանակի կարողութեան ենթադրութիւնները, նրա վրայ դրուած յոյսերը։

Ինչպէս նոր Թիւրքիան վերջին քառամեակում ապացուցել էր, որ հնի ու նորի մէջ տարբերութիւնը միայն արտաքին շպարն է, որ կառավարելու, քաղաքական, քաղաքակրթական, պատմական անհրաժեշտութիւնների ըմբռնումների մէջ՝ երկուսն էլ էապէս միևնոյնն են ու ընդունակ են միմիայն պառակտելու, քայքայելու և սպանդանոցներ ստեղծելու՝ այդպէս և ապացուցին, որ զինուորականութեան մէջ ևս, ո՛չ միայն մի քայլ առաջ չեն գնացել, այլ մանաւանդ աւելի յետ։

Կազմալուծումն՝ իր բոլո՜ր ճիւղերի մէջ...

Փախչո՜ւմ է թշնամու առջևից քաղցած, անվարժ, հայրենիքի պաշտամունքից զուրկ, պետութեան վրայ հաւատքը կորցրած զինուորը. փախչում է փափկասուն, անփորձ ու այլասերուած սպան։

Բացառութիւնները անզօր են՝ ոտնահարուած պատիւը վերականգնելու։

Բնական հետևանք փտախտի։

Ու Եւրոպան դառն փորձերից խրատուած, յուսահատ, Նոր-Դաշնակցութեան՝ Եօթներրորդ Մեծ պետութեան յաջողութիւններից շշմուած, այլ ևս չունի Թիւրքիան փրկելու, առ նուազն Եւրոպայում նրա գոյութիւնը անհրաժեշտ համարելու իր վաղեմի նշանաբանը։

Թշնամին մայրաքաղաքի դրան մօտն է և գուցէ դեռ առաջ սլանայ, բայց չկայ այլ ևս Մեծ Ալբիոնի սպառնալիքը յաղթական բանակը կանգնեցնելու։

Աւստրօ-սերբ կնճիռը, այդ կնճռի յետևում դաւող ու սեփական հաշիւների յարգարումին պատրաստուող Ռուսիա, Ֆրանսա, Անգլիա, Գերմանիա, Իտալիա—երկու գլխաւոր համախմբութիւններ — եթէ միմեանց հետ բաղխին իսկ, այդ ո՛չ թէ Թիւրքիոյ գոյութիւնը պահպանելու, այլ ժառանգութիւնը բաժանելու, մանաւանդ անգլօ-գերման մրցակցութեան մղումների, կանխամտածուած ծրագիրների համար են։

Ու վաղը պիտի կանգնի ինքնօրէն, անկախ Ալբանիան և ազատագրուած Մակեդոնիան՝ ո՛ւմ հետ էլ կապուի, պիտի մանի ծաղկումի, ուռճացումի շրջանը։

Իսկ Հայաստա՜նը...

Եւրոպայից վտարուածները պիտի արշաւեն փոքր Ասիա՝ աւելի ստուարացնելու համար կեղեքիչների ու տզրուկների արդէն իսկ ստուար բանակը...

Մենք ենք, ոլ մեր խօսքը չունինք, մեր տեղը չունինք...

ՎԱՂԻՆԱԿ

Կ. Պոլիս

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՀՄԱՑԵԱԿ ՋԱՆՓՈԼԱԴԵԱՆ

(«ՀԱՄՕ»)

1904 թուականի սկզբներում մի օր Ալէքսանդրոպոլի կենտրօնական կոմիտէի առաջ երևում է դպրոցական նստարանը նոր թողած մի թուխ պատանի։ „Ես եկել եմ ծառայելու Հ. Յ. Դաշնակցութեանը, վստահ շեշտով յայտնում է նա, ես խնդրում եմ ձեզ, որ գործ տաք ինձ, տերրօր կամ Հայաստան գնալ. ես ուզում եմ մեռնել հայրենիքի համար“։

Այդ պատանին՝ Հմայեակ Ջանփոլադեանն էր, „Համօն“, բնիկ Վայոց Ձորցի, կովկասում բաւական յայտնի մի ընտանիքի զաւակ։ Լայնաթիկունք, աշխոյժ, կրակոտ շարժուձևերով, մանկութիւնից ձիու վրայ և հրացանը ձեռքին մեծացած։ Իր ըմբոստ բնաւորութեան պատճառով կիսատ թողնելով դպրոցի դասընթացքը, գժտուելով հօր հետ—իրեն ամբողջ հոգով ու մարմնով նուիրա եռում է յեղափոխական շարժմանը՝ այնտեղ գտնելով իր ուժերի և զգացմունքների համապատասխան միջավայր։

Սակայն Ալէքսանդրոպոլի կոմիտէն նկատի առնելով նրա տարիքը, յեղափոխական ասպարէզում անփորձ լինելը, մերժում է նրան յանձնել մարտական գործեր, այլ որպէս շրջիկ-քարոզիչ՝ փորձուած շրջիկների ձեռքի

տակ, ուղարկում է Շիրակի գիւղերը։ Նա շրջում է գիւղերը, խօսում-քարոզում, գիւղական ենթակոմիտէների հաշիւները քննում, զէնքի տեղափոխութեան մասնակցում, բայց այս ամենը նրա սրտով չէ. նրա անզուսպ հոգին կռիւ, հերոսական գործեր է տենչում։

Այդ օրերում Ալէքսանդրոպոլը և կարսը Ցաճկա-Հայաստան ֆեդայական խմբեր ուղարկելու համար պատրաստութիւններ էին տեսնում. անցնում էր Կայծակ Վաղարշակի խումբը, և մի քիչ յետոյ անցնելու էր Թումանի խումբը։ Համօն խնդրում է կոմիտէին, որ իրեն էլ վերցնեն խմբերից մէկի մէջ. սակայն նորից նոյն առարկութիւններով մերժւում է։

Ցայտնի է Թումանի խմբի ողբերգական վախճանը։ Գուցէ ո՛չ մի անգամ ռուսական պաշտօնէութիւնը այնպէս ոտաց տակ չէր տուել մարդկային խիղճն ու պատիւը, քան այս դէպքում, երբ մի բուռն, սրբազան ոգևորութեամբ վառուած հայ երիտասարդներ գնում էին թիւրք զօրքի սուինների վրայով իրենց դարերով տառապած եղբայրներին օգնութեան. ռուս իշխանութիւնը լոյս-ցերեկով Օլթիի սահմանագծի վրայ, միացած թիւրք

Համայեակ Ջանֆոլատեան

զինուորների հետ, հրացանազարկ արեց հայութեան ամենաընտիր զաւակներին։ Ազգերի ողատագրութեան պատմութիւնների մէջ այս եղակի տարդ, յաւէտ անմոռանալի եղեռնին,—ուր երկու արիւնոտ բռնակալութիւններ իրար ձեռք են տալիս մի մարտիրոսող ժողովրդի դեմ—զոհ գնացին նիւրական Թումանը, Շիրակեցի Ցերտերը, Ալէքսանդրոպոլցի սքանչելի Վաղոն ու Մարտին Ստեփանեանը, հռչակաւոր Որսորդ-Գէորգը և միւս լուսահոգի նահատակները։ Ամբողջ հայութեան վրայ սուգ ու սարսափ տարածուեց, և միևնոյն ժամանակ վրէժի և ցասման հուժկու ձայներ յեղափոխական լայնածաւալ խաւերում... Շատերը բուռն փափագ յայտնեցին վրէժխնդիր լինելու այդ եղեռնը կատարող Բ ը կ ո վ կոչուած բորենուց, որ Օլթիի կազակների վաշտի պետն էր. սակայն այդ պատիւը վիճակուեց պատանի Համօին։

Համօն խնդրում-պահանջում է Ալէքսանդրոպոլի կոմիտէից, որ իրեն յանձնի այդ տերրորը, համոզելով, որ ինքը յաջող կը կատարէ, քանի որ լաւ ծանօթ է Օլթիին, իրենք այնտեղ ազի հանքեր ունին, Բրկովի հետ անձամբ ծանօթ է, նա կարող է այդ գազանին հէնց իր բնակարանում սպանել. մերժման դէպքում ինքը իր սեփական նախաձեռնութեամբ, ինքնագլուխ կը գնայ և կը կատարէ։ Կոմիտէի ընկերներից մի քանիսը գիտել և

ուսումնասիրել էին Համոի ուժեղ բնաւորութիւնը, հաւոզմունք էին գոյացրել նրա անյողդողդ կամքի և յանդգնութեան վերաբերմամբ։ Վերջապէս որոշւում է և նա գնում է Օլթիր։ Մի քանի օրից յետոյ վերադառնում է նա, գործը յաջող կատարած. Բրկովը Համոի վրիժառու ձեռքից գնդակահար ընկնում է հէնց իր թիկնապահ կազակի աչքերի առաջ։ Այդ կատարւում է 1904 թւին օգոստոսի առաջին օրերին։

Համոն տեղափոխւում է Թիֆլիս։ Նոյնպիսի յաջողութեամբ նա գլուխ է բերում մի պրիստաւի տերբօրը Թիֆլիսի ամենաբանուկ փողոցներից մէկի վրայ։ Այդ պրիստաւը մեծ եռանդ էր ցոյց տալիս դաշնակցականներին հետևելու, խուզարկելու, զէնքեր գրաւելու մէջ։

1905 թւի փետրուարին, Բագւում բռնկում է նոյն ռուսական պաշտօնէութեան սադրած այն մեծ արիւնոտ խաղը, որ յայտնի է „Հայ-թաթարական ընդհարում“ անունով։ Թաթարական խուժանը յարձակւում է հայերի վրայ. յանկարծակիի եկած հայերի մէջ հանդէս են գալիս միայն մի քանի տասնեակ դաշնակցական զինուած երիտասարդներ, որոնց քաջագործութիւնների մասին շատ է գրուած իր ժամանակին։ Համոն այդ անձնուէր քաջերից մէկն է լինում, որ ականատեսների վկայութեամբ ամենայն անվեհերութեամբ կռւում է, փողոցից փողոց անցնելով և մաքրելով հայ թաղերը գազանացած թաթար խուժանից։

Երբ ապացուցւում է, որ Բագւի թաթարական յարձակումը ներշնչուած և կազմակերպուած է եղել նահանգապետ Նակաշիձէի ձեռքով, որ յայտնի էր իր հայատեցութեամբ, առաջ էլ իբրև Երևանի նահանգապետ (փակագծի մէջ ասենք՝ նա էր, որ գրոհ տուեց Էջմիածնի հինաւուրց սրբավայրը և ծերունազարդ հայրապետի աչքերի առջև կազակներով խորտակեց մայր աթոռի գանձարանի դռները կողոպտելու համար վանքի երևակայեալ հարստութիւնները)։

Հ. Յ. Դաշնակցութիւնը չյապաղեց իր մահավճիռը այդ դաւադիր բիւրօկրատի նկատմամբ, և գործը յանձնեց Համոին և նրա նման անձնուրաց հերոսներին. սակայն, այս անգամ բախտը դաւաճանեց անվեհեր Համոին։

Երբ նրանք ընկերներով Բագւի քաղաքային պարտիզում սպասում էին Նակաշիձէի գուրս գալուն, յանկարծ շրջապատւում են լրտեսներով ու ոստիկաններով և դէպի ոստիկանատուն տարւում։ Համոն փախչում է ոստիկանատնից. ոստիկանները հետապնդում են և գընդակների տարափի տակ գետին ձգում այդ աննկուն անվախ պատանի հերոսին։

Այդպէս վերջանում է այս մատաղ, վառվռուն և ուժեղ կեանքը, որ մեր անմոռաց, սիրելի ընկերը հերոսական վճռականութեամբ դրել էր հայրենիքի սեղանի առաջ։ Կարճ ապրեց նա, սակայն այդ կարճ կեանքը մի մրրիկ էր, որ գիտէր թռչել կռւից կռիւ, յաղթանակից յաղթանակ։

Թո՛ղ անջնջելի մնայ նրա պայծառ անունը...

ՀԱՅ-ԳՈՒՍԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍ ՑԱՐՈՅԵԱՆ

(«ՑԱՐՕ»)

Մարտիրոս Ցարոյեանը—մէկն է նրանցից, որ դուրս են եկել մոռացութեան խորշերից, աղքատութեան ու զրկանքների ծոցից՝ իրենց ծնող ժողովրդի կորացած մէջքն ուղղելու, հայ ցեղի ապրելու կորովը ցոյց տալու. նրանք, ժողովրդի այդ իսկական, համեստ հերոսները, որ անթիւ են և անչափ, մնում են անանուն, համարեա մոռացուած, նման երկնքի աստղերին, որ լոյս կուտան, բայց անուն ու թիւ չունին։

Մարտիրոս Ցարոյեան

Մարտիրոսը ծնւել է Ալէքսանդրոպոլում 1880 թւին, չքաւոր ընտանիքից. սկզբնական կրթութիւնը ստացել է տեղական հայ-ծխական դպրոցում։ Սակայն 1896 թւին ռուս կառավարութեան կարգադրութեամբ փակւելով հայ դպրոցները՝ հազարաւոր մանուկների հետ նա էլ փողոց է շպրտւում։ Փոխանակ ուրիշ տղաների պէս պարապ քաշ գալու, նա նւիրւում է ընթերցանութեան, ձեռքն ընկած հայ գիրքը կարդում. առանձնապէս սիրում է հայոց և ազգերի ազատագրական կռիւների պատմութիւնները։

Հայրը նրան մի կտոր հացի տէր դարձնելու համար տալիս է՝ քարտաշութեան—որմնադրութեան արհեստին, որ մասնաւորապէս զարգացած է Ալէքսանդրոպոլում։ Այդ շրջանում նա նորից չի թողնում ընթերցանու-

թիւնը, հաւաքում է իր գլխին մի քանի ընկերներ, միասին կարդում են, հետևում են յեղափոխական հրատարակութիւններին, և նոյնիսկ իրենց չափազանց սուղ միջոցներով Շիրակի գիւղերից մէկում մի գաղտնի գրադարան են պահում։ Նրա հարուստ հոգին հանգիստ չի գտնում արհեստի մէջ, շուտով թողնում է արհեստը և ամբողջապէս յանձնւում է յեղափոխական գործունէութեան, որ այդ թուականներում Ալէքսանդրոպոլում շա՜տ թոյլ էր, բայց և այնպէս մի խմբակ կար, որ լուռ ու մունջ շարունակում էր յեղափոխական գործը—զէնք ձեռք բերել և ուղարկել թիւրքիա։ Իր շրջանի երիտասարդներից խմբեր է կազմում—մարտական և դրամական, նոյնիսկ կարողանում է կանանցից էլ մի խումբ կազմել—„Սօսի“ անունով (Սերոբի կնոջ անունը), որը ժամանակագրական կարգով՝ առաջին կանացի խումբն է լինում Ալէքսանդրոպոլում։

Մարտիրոսը, որ այնուհետև „Ցարօ“ անունով է յայտնւում, ընկնում է գիւղերը, թէ խմբեր կազմում՝ քարոզելով յեղափոխական գաղափարը, թէ փոքրիկ գրադարաններ հիմնում։ Առանձնապէս մի խմբակ էլ է կազմում, խուզարկու անունով, որի գործն է լինում՝ հետևել թիւրքերին, որ Ցաճկաստանից գալիս էին զէնքեր գնելու։ Քիչ չէ պատահել, որ նրանք կամ խանգարել են զէնք գնելը կամ խլել են զէնքերը, կամ այդ թիւրք գործակալներին ոտով-գլխով անյայտացրել են...

1902 թւի պետական զօրահաւաքին՝ Ցարօյին վիճակւում է զինւոր լինել և գնում է Ռուսաստան. սակայն մի քանի ամիս յետոյ, նա փախչում է զինւորական ծառայութիւնից, գալիս է Կովկաս Թիւրքա-Հայաստան անցնելու համար։ Վրայ է հասնում 1903 թուականը—այդ պատմական տարին՝ հայ եկեղեցիների կալուածքների գրաւման տարին։ Ժողովրդական համատարած խանդավառութեան այդ շրջանում պակաս չէին և մատնիչներն ու լրտեսները, որ սուերում էին այդ հերոսական օրերը։ Դրանցից մէկն էր ոմն կաւալէր Պետրոս Կարապետեան՝ Կարսի գաւառապետի թիկնապահը։ Հ. Ց. Դաշնակցութեան որոշումով, Ցարօն օգոստոսի առաջին օրերին Ալէքսանդրոպոլում, ահագին բազմութեան մէջ, ատրճանակի մի քանի հարուածներով վերջ է տալիս այդ ամարդ հայի կեանքին։

Այնուհետև Ցարօն Կարսումն է։ Պատրաստւում էր Հայաստան գնալ Խանի մեծ խումբը։ Ցարօն ֆէդայի է։ Սակայն, Կարսի կենտ. կոմիտէի կարգադրութեամբ նա յետ է ընկնում կատարելու կարսեցի Շարիֆ Լաչիմ-Ռէկովի տերրօրը. այդ հարուստ, դիրքով թիւրքը ռուսպետական պաշտօնեայ էր և միևնոյն ժամանակ թիւրք կառավարութեան գործակալ, որ շարունակ իր կազմակերպած լրտեսների միջոցով՝ լուրեր էր հաւաքում ու հաղորդում „Դաշնակցութեան“ գործունէութեան և խմբերի մասին թիւրք կառավարութեանը։ Օրը ցերեկով Ցարօն սպանում է նրան. ոստիկանը հետապնդում է Ցարօյին, սակայն խիզախ ֆէդային ծանր վիրաւորում է այդ ոստիկանին, և ազատւում, գնում, միանում Խանի խմբին։

Ցարօն՝ իբրև ձիաւոր-առաջապահ՝ խմբի հետ անցնում է սահմանը։ Ցայտնի են Խանի մեծ խմբի յանդուգն և օրեր տևող կռիւները թիւրք զօրքի, Համիդէի և քիօրդ ու թիւրք խուժանի հետ Գոմաձորում, Բոցիկի սարում և Բասենի դաշտերում։ Ցայտնի է նոյնպէս այդ կորովի խմբի անսահմանօրէն ցաւալի վախճանը—1903 թւի սեպտեմբերի կիսին։ Խումբը մնալով առանց փամփուշտի և հացի, օրհասական կռիւ է մղում, ուր ընկնում են ահագին թւով ռազմիկներ. ազատւում են մի երեսուն հոգի միայն։ Ցարօն ևս ընկնում է։

Տարիներ մնացին մեր նուիրական հերոսների նշխարները լեռների և ձորերի մէջ, վայրի հաւքերի կերակուր, անձրևի, ձիւնի և քամու բերան։ Հայ գիւղացիները սիրտ չէին անում անցնել այդ սրբազան վայրով, որովհետև թիւրք գիւղերի սահմանների մէջն է գտնւում. միայն երբեմն-երբեմն վախով, գիշերները գաղտնի, ամենայն երկիւղածութեամբ հաւաքում էին մեր նոր վկաների ցիր ու ցան մասունքները, որ իբրև նոր կեանքի Ցարութեան սերմեր ցանւած են Հայոց աշխարհի արիւնոտ հողերում... հաւաքում են և թաղում եկեղեցիների գաւիթներում։

Սակայն, օսմանեան սահմանադրութեան առաջին իսկ օրերում, թիւրք գիւղացիները հայերի հետ գնացին, լալով ու համբուրելով հաւաքեցին մնացած նշխարները՝ թողութիւն աղերսելով իրենց անգիտակից յանցանքի համար և մեծ հանդիսով ամփոփեցին Հայոց գերեզմանատանը...

Ո՞վ գիտէ, սակայն, թէ արդեօք Ցարօի նշխարները հանգչո՞ւմ են եղբայրական շիրմի մէջ, թէ՞ ջուրն ու քամին, հաւքն ու թռչունը քշել-տարել են ձորից ձոր և սարից սար, և ո՞ր քարի տակ թաղել, ո՞ր հողի մէջ խառնել...

Ցարօի Ալէքսանդրոպոլի ընկերները կենսագրական տեղեկութիւններ հաղորդելով Նրա մասին, այսպէս են վերջացնում գրութիւնը.—„Ցարօն անկեղծ և եռանդուն յեղափոխական էր. և Նրա վերջը պակաւեց անձնուիրութեան պաշտելի օրինակով. թող մեր ընկերոջ շերիմը անյայտ լինի, բայց մեր սիրտը Նրա շիրիմն է՝ միշտ կենդանի պահելու և պատկերացնելու Նրա սուրբ յիշատակը“։

ՀԱՑ-ԳՈՒՍԱՆ

ՆԱՏԱՂԷ

Ցաւով ենք արձանագրում այդ վաղաժամ և անակնկալ մահը։ Առողջ, զւարթ, կենսուրախ մի երիտասարդ, որ աքսորի զրկանքներում, նիւթական ծայրագոյն թշւա-

ութեան մէջ՝ երբէք ընկճուել չգիտէր, որովհետև ապրում էր մաքուր, գաղափարական սնունդով, խօսում էր անդադար ու խանդավառ, պաշտպանում էր եռանդով ու համոզումով ընկերական շրջաններում իր սիրած թեզիսները և պատրաստ էր իր կեանքը զոհաբերել յանուն այդ թեզիսների։

Մի ծանր, աղէտաւոր պատահար էր, որ կտրեց այդ հաւակերելի կեանքի թելը։ Նատաձէն մեռաւ մի քանի ամիս առաջ, Կ. Պոլսում, հեռու իր կովկասեան հայրենիքից, գեղեցիկ Վրաստանից, ուր գործել էր 1905—1906-ի երկունքի օրերում և ուսկից տարագրուել էր նախ Ռուսաստան ապա—նիւթական հոգսերի ճամբու վրայ—դէպի Բոսֆորի եզերքը։ Այդտեղ նա օտար չէր զգում ինքզինքը, գրեթէ միշտ մերայնոց շրջանում էր, մեզ պէս մտածող ու զգացող, մեզ պէս տարագիր և ըմբոստ։ Հանգուցեալը ծագումով վրացի էր, բայց պատկանում էր միջազգային յեղափոխական բանակին, գործել էր ռուս սոցիալիստ-յեղափոխականների շարքերում, գրել էր բազմաթիւ և շահեկան յօդուածներ ազգային ու տգրաբային խնդիրների մասին, „Գօրցեվ“ կեղծանունով։ Գրիչ ունէր և գիտութիւն—և դրա հետ մի ազնիւ, շիտակ հոգի, մի անկեղծ, անաչառ միտք։ որ այնքան, դժբախտաբար, հազուագիւտ է վրացական ու ընդհանրապէս կովկասեան հրապարակագրութեան աշխարհում...

Այդ հանգամանքն իսկ առանձնապէս զգալի է դարձնում մեզ համար՝ Նատաձէի ողբերգական մահը։

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹԻՒՆ

VIII

ՎԵՐԱԾՆՈՒԹԵՍՆ ՇԱՐԺՈՒՄԻ։

ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՒՑԵՐԻ ՄԷՋ

Բ.

Թիւրքահայ ուսանողութիւնը 40-ական թուականներում.—Ազդեցութիւններ. — Պատմական անցքերը եւ պարիզեան մթնոլորտը. — Յեղափոխութիւն եւ հայրենասիրութիւն —Լամարտինի ճառը Մուրադեան վարժարանի բացումին.—Թիւրքահայ համալսարանականի եւ հանրային գործիչի տիպը.—Գրիգոր Օտեան՝ վաղեմի հայ ուսանողութեան մասին. — Ռուսինեան եւ Պալեան. — Ազգային Սահմանադրութեան յղացումը. — Հայ մամուլը Թիւրքիոյ մէջ. — Հայրենասիրական ճնարը. — Հայր Ալիշան, իր դէմքը եւ իր գործը. — Հայկական ըմբոստացման տեսորոցներ. —

Քառասնական թուականներում ենք։

*Հայ ուսանողութիւնը երևան է գալիս արևմտեան ուսման տաճարներում, հայ առաջին համալսարանականները *) — Ձիրքոտ, տոկուն, ուսումնասէր — ագահօրէն կլանում են եւրոպական մտքի արդիւնքները, որպէս զի գան պատուաստելու հայրենիքի խոպան միջավայրին։*

Եւ թիւրքահայ վերածնութեան այդ առաջին ծիծեռնակները տոգորուած են ընդհանրապէս արմատական դաւանանքներով, դեմոկրատիզմի, ռամկավարութեան հաւատամքով, և խանդավառ, ազատաշունչ հայրենասիրութեամբ։

Պարիզը կենտրոն է և սիրուած ժամադրավայր մեր փոքրաթիւ ուսումնատենչ երիտասարդութեան։ Պարիզի մէջ հաստատուել էր Մխիթարեան-Մուրադեան վարժարանը, Պարիզի մէջ խմբուել էր ապագայ հայ գործիչների պլեադը.— Նիկողայոս Պալեան, Խաչատուր Պարտիզպան, Խաչատուր Միսաքեան, Նահապետ Ռուսինեան, Գրիգոր Աղաթոն, Կարապետ Իւթիւճեան, Գաբրիէլ Այվազովսկի, Ամբրոսիոս Գալֆայեան, Խորէն Գալֆայեան, Յովսէփ Շիշմանեան (Ծերենց) և ուրիշներ։

Պարիզը կենտրոն էր և ամբողջ մտածող աշխարհի ուշադրութեան...

Հազուագիւտ մի շրջան էր։ Ըմբոստութեան շունչ էր անցնում ամբողջ արևմտեան Եւրոպայով և Պարիզը պատրաստում էր 1848-ի աշխարհադղորդ փոթորիկը։

Յեղափոխական խօսքը հնչում էր գաղտնի, դասադրական ակումբներում — Բլանկիների որոտախօս շրջաբերութիւններով—յեղափոխական միտքը այլ և այլ ձևերով արծարծուում էր մամուլի ու գրականութեան մէջ, բառբառում էր անդամ համալսարանական ամբիոններից։ Լամարտին, Վիկտոր Հիւգո, Դը Միւսսէ հնչեցնում էին իրենց գիւթիչ քնարի դայլայլները։ Օգիւստ Կոնտ ծանուցանում էր աշխարհին պոզիտիվիզմի արմատական, փրկարար հաւատամքը։ Միշլէ և Գիզո հրատարակում էին իրենց անմահ գործերը։ առաջինը Ֆրանսիական Յեղափոխութեան դրուագներն էր պատմում իր թեւաւոր, անզուգական լեզուով ու ոճով, երկրորդը համաշխարհային քաղաքակրթութեան ընթացքն էր ուրուագծում իր ներհուն գիտունութեամբ, ճշմարտախօս գրչով։ երկուսն էլ հռչակում էին իրենց մեծ հայրենիքի առաջապահ դերը ընդհանուր քաղաքակրթութեան պրոցէսի մէջ։ Էդգար Քինէ, մի այլ հանճար, շարունակում էր վոլտէրեան աւանդութիւնը, թունաւոր ոճով խարազանում կրօնի ու կղերի կեղծիքները, մարդկութեան խղճի վրայ լեռնացած նախապաշարումներն ու անապաշտութիւնները։ Եւ պարիզեան ամբիոններից որոտում էր ազատ մտքի քարոզը նոր կեանքի ծարաւի երիտասարդութեան ականջներին... Վրայ է հասնում, վերջապէս, փետր-

---

) Եղել են, անշուշտ, հայ ուսանողներ նաև քառասնական թուերից առաջ, բայց բուն խմբական հոսանք, որոշ դուռնաւորութեամբ, ծայր է տալիս 40-ական թուականներին։

ւ ա ն ե ա ն Ց ե ղ ա փ ո խ ո ւ թ ի ւ ն ը (1848 թ.), որ անմիջապէս փոթորկում է եւրոպական ցամաքը, հրդեհելով մի շարք մայրաքաղաքներ, խորտակելով միապետական գահերը...

Ահա մի այդպիսի պատմական մթնոլորտում էր ուսանում հայ անդրանիկ հմայաբարանական բոյլը։ Նրա անդամները հանդիսատես են պատմութեան այդ վեհ դրամաներին, ոմանք նոյնիսկ փորձում են իրենց բաժին մասնակցութիւնն ունենալ։ Պարիզը նրանց դասախարակն էր և ոգեւորութեան աղբիւրը, պարիզեան եռող կաթսայի մէջ նրանց զգայուն հոգին կրում էր ուժգնօրէն անցքերի ազդեցութիւնը, որդեգրում Ցեղափոխութեան պանծալի սկզբունքները, որդեգրում մանաւանդ հ ա յ ր ե ն ի ք ի ու ժ ո ղ ո վ ր դ ի պ ա շ ա ա մ ո ւ ն ք ը... և սրտի կսկիծով յիշում էին նրանք իրենց փոքրիկ հայրենիքը Ասիական Արեւելքում, ծրարուած սարկութեան և խաւարի անթափանցիկ մառախուղով...

Յիշում էին և խորհում և յղանում „ծրագիրներ“... Ծրագիրներ ա զ գ ա յ ի ն վ ե ր ա ծ ն ո ւ թ ե ա ն, ոչ միայն մտաւոր, կուլտուրական, այլ և... քաղաքական։ Այդտեղ է յղացուում 1863-ի Սահմանադրութեան նախագիծը, ի դէմս „Հայասատեղութեան“ երկու խոշոր դէմքերի՝ Նիկողայոս Պալեանի և Ղահապետ Ռուսինեանի։

Որքա՜ն յոյզեր ու յոյսեր, ո՜րպիսի տենդային խանդավառութեան օրեր։ Եւ ինչպէ՞ս չվառուէր այդ ազնիւ երիտասարդութիւնը, ինչպէ՞ս նա չբռնուէր հայրենասիրութեան տենդով այդ հազագիւտ օրերում, երբ ինքը ֆրանսիական հանրապետութեան արտաքին գործերի մինիստրը, Լ ա մ ա ր տ ի ն, հանդիսաւոր կերպով, Մուրադեան վարժարանի բացման իր ճառի մէջ, տալիս էր հայ ազգին հասունութեան վկայական, ներբողում էր նրա լեզուն, որոշում էր նրա դերը, արժէքը...

„La République Française—ասում էր տիեզերահռչակ բանաստեղծը, դիմելով իր առջև համախմբուած հայազգի հանդիսականներին *)— envisage la grande question de la régénération orientale...

„... Les germes de la nationalité orientale dont vous êtes l'un des plus puissants rameaux, se developpent... en France... L'étude de votre belle langue arménienne est utile aux français et réciproquement“ **)... (Ֆրանսիական Հանրապետութիւնը իր մասնաճիւղութեան առարկայ դարձրած է Արեւելքի վերածնութեան մեծ խնդիրը... Սաղմերը արեւելեան ազգայնութեան, որի ամենակենսունակ ճիւղերից մին էք դուք, զարգանում են Ֆրանսիայում... Ձեր հայկական սիրուն լեզուի ուսումնասիրութիւնը օգտակար է ֆրանսիացիներին և—փոխադարձաբար)..

***

Հայ ուսանողները հետամուտ էին մեծ մասամբ գործնական գիտելիքների, ընտրել էին այլ և այլ մասնաճիւղեր, ոմանք բժշկութիւն, ուրիշները՝ ճարտարապետութիւն, ուրիշները՝ մանկավարժութիւն, մի երկուսը՝ աստուածաբանութիւն։ Գ ո ր ծ ն ա կ ա ն մտահոգութիւնները գերիշխող էին այն ժամանակ, իբրև ազգային նահապետական իրականութեան մի պահանջ։ Հ ա յ կ ա կ ա ն ա ր հ ե ս տ ը, որ մինչ այն մատակարարել էր իր արդիւնքները տիրապետող ցեղին, չէր այլ ևս կատարելագործուում և 19-րդ դարի առաջին կիսում՝ չէր այլ ևս գոհացնում մարդկանց պահանջները։ Անգամ Թիւրքի — եւրոպաբնակ Թիւրքի — կենցաղն ու ճաշակը բաւականաչափ նրբացել էին և պահանջները բազմացել,—մինչդեռ հայ արհեստը մնացել էր քարացած իր հինաւուրց ձևերի մէջ։ Պոլսի և Զմիւռնիայի Թիւրքը սկսել էր հագնուել եւրոպական ճաշակով — այդ վերջինը մնում էր գործել նրա նեստ ու կացի մէջ... Պէտք էր զարկ տալ ճարտարարուեստին, ընդօրինակել Եւրոպային։ Եւ պէտք էր շտապել... Ահա թէ ինչու „գործնական կրթութեան“ տենչը առանձնապէս շեշտուում էր այն ժամանակուայ Թիւրքահայ հասարակութեան մէջ և գրեթէ արհամարհուած էր տեսականը, „վերացականը“։ Նոյն երեւոյթը, կարելի է ասել, աւանդաբար պահպանուել է մինչև օրս։ Այդ արհամարհանքը յայտնապէս քարոզուում էր Թիւրքահայոց նորաբողբոջ մամուլի մէջ։ Քառասնական Թուականների վերջերում, տնտեսական գիտութիւնների ամենայայտնի ժողովրդականացնողը, Զ օ ր ա յ ե ա ն, „Հայաստան“ լրագրի մէջ յորդոր էր կարդում հայ ուսանող երիտասարդութեանը՝ ոյժ տալ նախ „հաց վաստակելու գիտութիւններուն“, ոչ այնքան՝ լեզուագիտութեան, գրականութեան, փիլիսոփայութեան։

„Մեզի առաւել պէտք եղածը անանկ մարդիկ են, որ երկրագործութիւն, մեքենագործութիւն, ճարտարարուեստութիւն, վաճառականութիւն, բժշկութիւն ասվրին“ *)։

Նոյն „Հայաստանը“ գրում էր դեռ 1846 թ. յուլիս 6-ին.

„Հինգ-վեց տարուան մէջ ազգիս երիտասարդներէն շատ հոգի դէպի Եւրոպայի զանազան կողմերը գիմեցին, ուսման համար ծարաւի սրտերնին զովացուցին... և ասոնցմէ կանուխ ոտքի ելլողները շահաւէտ արհեստներին ձեռք բերելով, արդէն դարձան իրենց հայրենիքը և... ձեռքերնուն եկած նպաստն ալ չեն խնայեր ազգին“...

Դրանց մէջ էր Ցարութիւն Ցատեան, որ յետոյ դար-

*) Փետրուարեան Ցեղափոխութիւնից քիչ յետոյ էր։

**) Lamartine, Discours lors de l'inauguration à Paris du Collège arménien de Samuel Moorat.

*) „Հայաստան“, 5 փետր. 1849։

ձաւ Արթին փաշա, գրեթէ ղեկավար Թիւրքիոյ արտաքին քաղաքականութեան։

Այդպէս էր նշանաբանը։ Կեանքը, սակայն, պատմական բացառիկ վայրկեանը մղում էր հայ ուսանողներին և դէպի Սորբոնի այլ ամբիոններ, ուսկից նրանք կարող էին լսել նաև „վերացական“ կամ ուրիշ խօսքով քաղաքական ու հասարակական գիտութիւնների վերջին խօսքը։ Լսում էին նրանք այդ գիտութիւնները, ըստ երևոյթին կցկտուր, պատահաբար, ի միջի այլոց։ Լսում էին և վառւում։ Սիրտերը բարձրանում էին և ուժգին բաբախում ֆրանսիական անցքերի ժխորի մէջ, յեղափոխական հռետորութեան թովիչ ազդեցութեան տակ...

Այդ վերջինը մշակում է, մարզում Թիւրքահայ երիտասարդին, պոլսեցուն, որ արդէն իսկ արտիստ է ի ծնէ, իր բնութեամբ, խառնուածքով։ Նա հետևում է իր գործնական մասնաճիւղին, գնում է երբեմնապէս ունկնդրելու Սորբոնի փիլիսոփային ու պատմագրին, սակայն նրա ուշքն ու միտքը գրաւած են բանաստեղծների քնարաշունչ մարգանքներով, բեմբասաց քարոզիչների մեծադղորդ ճառերով... Նրա միտքը գործում է, զգացմունքը՝ աւելի ևս. Քինէն, Գիզօն, Կոնտը ազդում են Թիւրքահայ ուսանողի հոգու և մտայնութեան վրայ, բայց անհամեմատ աւելի են ազդում Հիւգօն և Լամարտինը։

Այն ժամանակից, կարելի է ասել, դարբնուեց Թիւրքահայ մտաւորականի և հանրային գործիչի տիպը։ Աւելի ճարտասան՝ քան հետախոյզ-հրապարակագիր։ Աւելի բանաստեղծ՝ քան մտածող-ուսումնասիրող։ Եւ երբ թերթում էք Թիւրքահայոց մամուլը XIX դարի քառասնական թուականներից, չէք կարող չնկատել այն ծայրայեղ մտաւոր աղքատութիւնը, որ տիրում է նրա մէջ։ Ամբողջ տասնեակ տարիների ահագին տարածութեան վրայ՝ դուք հազիւ կը գտնէք մի քանի քիչ-շատ լուրջ ուսումնասիրութիւն՝ հասարակական, տնտեսական կամ քաղաքական խնդիրների շուրջ։

Այդ տիպը հարազատութեամբ գտնում էք Թիւրքահայոց զարգացման բոլոր շրջաններում. այդ տիպի հիմնագծերը մենք տեսնում ենք ամեն կարգի հանրային ու քաղաքական գործիչների մէջ, անգամ նրանց՝ որոնց վիճակուած էր առաջնակարգ դեր խաղալու ոչ միայն իրենց հարազատ հայրենիքի, այլ և ամբողջ Թիւրքիոյ քաղաքական ու դիւանագիտական էւոլիւսիոնի մէջ։

Բանաստեղծ էր Գրիգոր Օտեան, օսմանեան սահմանադրութեան նշանաւոր ռահվիրան, որ մէկն էր 1848-ի գաղափարներով սնուած „համաստեղութեան“ անդամներից։ Երբ նա գրում է 40-ական թուականների հայ մտաւոր սերնդի մասին, նրա կրած ֆրանսիական ազդեցութիւնների ու հովերի մասին, — ամենից ուժով ու խանդավառութեամբ նա ներբողում է „Լամարթինի, Թիէռռիի, Կիզօի զբաղարթուիչն պերճախօսութիւն“...

... „Բանաստեղծ մը կը նախագահէր (փետրուարեան) յեղափոխութեան *), բանաստեղծ մը, աւա՜ղ, որ և այնքան պիտի ներգործէր իմ կեանքիս վրայ ալ“... Այսպէս է գրում Միթհատ փաշայի հռչակաւոր գործակիցը 1879-ին հրատարակած Ռոդոսինեանի Փիլիսոփայութեան դասագրքի իր հակիրճ նախաբանում։

Բանաստեղծ էր Նիկողայոս Պալեանը, նաև որ համարւում է 1863-ի մեր Ազգային Սահմանադրութեան գլխաւոր նախագրդիչ (*promoteur*)... „Ինքն իսկ էր աւիւն և յափշտակութիւն“... ասում է նրա մասին Գրիգոր Օտեան, նոյն նախաբանի մէջ։

Բանաստեղծ էր Նահապետ Ռուսինեանը — Պալեանի սիրած և անբաժան ընկերը, որի հետ միասին երկար գիշերներ որոճել էին Պարիզում իրենց նուիրական ու հայրենական ծրագիրները։

Մինը, Պալեան, հետևում էր Էդգար Քինէին, միւսը, Ռուսինեան՝ Վիկտոր Կուզէնին։ Աւարտելով իրենց մասնաճիւղը և իւրացնելով 48 թուականի աւետարանը՝ երկու ընկերները որոշում են ի գործ դնել այն՝ ազգային կեանքում։

„Ընդունայն ճգնի մարդ ճողոպրել ազգին ազդեցութենէն“ — ասում է իրաւամբ Օտեան։ „Եւ ազգը՝ առաջին բառն էր, զոր արտասանեցին Պալեան ու Ռուսինեան, երբ միացան սոյն տողերս գրողին հետ“... 1849-ին (մի այլ վկայութեամբ՝ 1851-ին) Նահապետ Ռուսինեան, իբրև արդէն բժշկապետ, վերադառնում է Պոլիս, հաստատւում է Իսկիւտար, Օտեանի և այլ ընկերների հետ — և սկսւում է Սահմանադրութեան մայրխմբակի գործունէութիւնը։

„Այն օրերուն՝ Ազգը վարչութեան պէս բան սը ունէր, լեզի պէս բան մը, դպրոցի պէս բան մը“ (Օտեան)։

Երեք-չորս երիտասարդները ձեռնարկում են կերպարանաւորելու այդ երեք „բաները“, որ էական պայմաններն են ազգային առաջադիմութեան։ Եւ այդ ձեռնարկից պիտի ծնէր Ազգային Սահմանադրութիւնը **)։

*) Լամարտինի մասին է խօսքը։

**) Անշուշտ, մէկ կամ երկու հայրենասէրների գործ չէր այդ ահագին ձեռնարկը և նրա իրագործումը՝ այն ժամանակուայ պայմաններում։ Կեանքի, մասնաւորապէս Թիւրքիոյ քաղաքական կեանքի պայմանները, Եւրոպայի միջամտութեան յարատև սպառնալիքը, քրիստոնեայ հպատակներին գոհացնում տալու յարաճուն անհրաժեշտութիւնը — այդ բոլորը դիւրացնում էր հայկական երազների մասնակի իրականացումը։ Բայց և, անշուշտ, անհատները, իրենց կորովի նախաձեռնութեամբ, իրենց յամառ հետապնդումով մեծապէս զարկ են տուել նոյն երազների իրականացման։ Այդ անհատների շարքումն են նաև Յակոբիկ Կրճիկեան, դօքտոր Սերվիչեն, որոնք նոյնպէս 40-ական թուական-

Շատ տքնեցին, տանջուեցին. շատ պայքարներ մղեցին... Օտեան ասում է մեկամաղձօրէն (1879-ին).

„Երբ այնքան տարիներէ ետքը մտքով կը յածիմ այն ժամանակներուն մէջ, որ լաւ պատերազմը պատերազմեցանք, լուսոյ՝ խաւարի դէմ, ժողովրդականութեան՝ ամիրայութեան դէմ և սահմանադրութեան՝ եկեղեցական ու աշխարհական իշխանութեանց դէմ, երբ աչքիս առջև կը բերեմ այնքան խուրդուռները, այնքան ոպառնալիքները, այնքան ահ ու դողը, այնքան վտանգը, որոց մէջէն անցանք... զարմանքը կը պատէ և կ'ըսեմ. ի՞նչ վեհ է երիտասարդութիւնը“...

***

Կենսագրողները հազագիւտ են, եղածներն էլ՝ խիստ ժլատ—և բառասնական թուերի մեր այդ պատուական երիտասարդութեան կեանքն ու գործը մնում են տակաւին չլուսաբանուած։

Օտեան համեմատում է պարիզեան խմբի երկու մեծագոյն դէմքերը—Պալեանն և Ռուսինեան—և գտնում է երկուսի միջև անվերածելի ներհակութիւն.

„Նիկողայոս Պալեան... ինքն էր ուսուն ու յափշտակութիւն, մինչդեռ Ռուսինեան անխառով խորհրդածութիւն էր... Մին անսայթաք ընթանար գիծերով շրջապատեալ, միւսը խոյանար տատանեալ ի փոթորկաց և ի շանթից հարուածեալ՝ երևակայութեան բացած ափիւռներուն մէջ“...

Համեմատութեան եզրակացութիւնը թուում է փոքր ինչ բռնազբօսիկ։ Ռուսինեանը, որ ներկայացուում է իբրև „անխառով խորհրդածութիւն“ և հակոտնեայ Պալեանի—ոչ պակաս ուսուն էր, յափշտակուող, վառվռուն ու թռթռուն։ Այդ կողմից նա թերևս կը գերազանցէր բոլոր միւսներին։ Զգացմունքի տիրապետութեան տակ նա երբեմն հասնում էր բորբոքման ու պաֆոսի գագաթնակէտին և գործում էր անօրմալ, հիւանդագին թռիչքներ։

Այդ տաղանդաւոր կեսարացին *), անտարակոյս, հայ մտաւորական բոլոր ամենաօրիժինալ դէմքն էր և գուցէ միանգամայն ամենացայտուն ու ամենահարուստ ներկայացուցիչը՝ այն տիպարի, որ քիչ առաջ յատկանշեցինք։ Նա մարմնացած լիրիզմ է և սքանչելի հռետոր։ Մի հմայիչ լեզու և մի հազագիւտ պերճախօսութիւն... Ընտիր, նուրբ, բարձրաալաց և ներդաշնակ։ Առանց շինծու ժեստերի և գեհենիկ ճռռոմաբանութեան։ Հայոց փոքրիկ պարլամենտի զարդն էր, Ազգային Ժողովի „սոխակ-բեմբասաց“։ Լսում էին այդ սոխակին սիրով ու զմայլումով։ Երբեմն, շղթայազերծ հեղեղի պէս դուրս էր նետուում իր հունից, զգացումները յորդանում էին, համակում նրա բովանդակ էութիւնը, նա ճառում էր և հեկեկում, լալիս էր և լացացնում...

Այդպէս էր Ռուսինեանը։ Բժիշկ էր և բանաստեղծ, ճարտասան էր և լեզուագէտ, փիլիսոփայ էր և հասարակական գործիչ,—ամեն բանով զբաղուում էր, ամեն տեղ զարնուում էր նրա անխոնջ, մրրկուած ու որոնող հոգին։ Կեանքի բոլոր աշխարհներում ստանձնել էր ռէֆորմատորի, վերանորոգչի պաշտօն և անդադար յաղնում էր պրոժէներ, ծրագիրներ։

Սակայն... ուտոպիստի ծրագիրներ էին—գատապարտուած մեռնելու։ Բանաստեղծ-ռէֆորմատորի ցնորքներ էին, որ չէին՝ կարող շօշափելի հետքեր թողնել սերունդների գիտակցութեան մէջ։ Որովհետև, իր փայլուն ու բազմակողմանի ընդունակութիւնների հետ՝ Ռուսինեանն ունէր մեր յատկանշած տիպարի անխուսափելի գծերը... Նա ուսելի բանաստեղծ էր, բան մտածող։ Ուսելի յօրինող՝ քան գործադրող։ Ուսելի՝ փայլուն՝ քան խորունկ։ Ոչ ներհուն քաղաքագէտ էր, ինչպէս ոմանք կը պնդեն, ոչ էլ քաղաքական գործիչ։

Եթէ նա ծնուած լինէր եւրոպական միջավայրում,—կը լինէր իբրև գրագէտ կամ բանաստեղծ մի Հիւգօ, մի Լամարտին, և իբրև քաղաքագէտ—մի Թիէռ, մի Գամբետտա...

Այսպէս է ասում Ռուսինեանի նորագոյն կենսագրողներից մին. բժ. Թորգ., „Հանդէս Ամսօրեայ“ի իր շահեկան յօդուածաշարքում **)։

ներին, թերևս անկախ մեր յիշատակած անհատներից, յղացել են նոյն ծրագիրները, աշխատել են միևնոյն ուղղութեամբ։ Թուում է, սակայն, թէ հայրենասէրների այդ գեղեցիկ շարանի մէջ կենտրօնական դէմքն է Նիկողայոս Պալեանը, որ իր կարող ազդեցութեամբ, իբրև պալատի ճարտարապետ, ամենից աւելի էր նպաստել Սահմանադրութեան խաղաղ նուաճման և որ մեռել էր վաղաժամ, նախ քան իր երազն իրագործելիը... Համեստ մարդու կատարած դերը մնացել էր բոլորին անյայտ. բոլորն էլ մոռացել էին նրան։ Բոլորը... բացի իր սիրեցեալ և անբաժան Ռուսինեանից, որ նոյնպէս տասնեակ տարիներ պահել էր այդ իրողութիւնը սրտի խորքում, իբրև նուիրական մի գաղտնիք և միայն 1870 թուին, Ազգային Ժողովի 4 դեկտեմբերի նիստի մէջ, մի անանուն միջադէպից (Յակոբ Պալեանի հրաժարականից) ցնցուած, արտասուելով բաց է անում հայութեան առջև այդ կարևոր գաղտնիքը, պատմում է հեծկլտալով իր յուշերը պաշտելի ընկերոջ Նիկողայոս Պալեանի մասին, պատմում է, թէ ինչպէս է նա աշխատել Սահմանադրութիւնը նուաճելու համար, թէ ինչպէս են 40-ական թուականներից համախմբուել նրա շուրջը ուրիշ դէմքեր, երբեմնի ուսանողներ, Օտեան, Աղաթոն և ինքը... Ռուսինեան յիշում է, վերջապէս, իր ընկերոջ վաղաժամ ու դժբախտ վախճանը և այդտեղ, ճառի վերջում, նրա կոկորդը սեղմուում է, ձայնը հատնում յուշերի, զգացումների ուժգին յորձանքից, հուետորը թողնում է ամբիոնը և հեկեկալով դուրս է նետուում սրահից... Տեսարանը վերին աստիճանի յուզիչ է, ամբողջ Ժողովը պահպանում է խորին, կրօնական լռութիւն, տասանուած այդ սրտառուչ ճառից և այդ տխուր ու անակնկալ յայտնութիւնից...

Ազգային Ժողովի քարտուղարը արձանագրում է.

(Սարուռ. ստացուեցաւ ի ժողովն եւ յունկնդիրս)։

Տես „Ատենագրութիւնք Ազգային Ժողովոյ“ (պաշտօնական հրատ. Ազգ. Պատրիարքարանի)։

---

*) Ծն. 1819 թ.—վախճ. 1876 թ.։

**) „Հանդէս Ամսօր.“ 1902—903 թ.։

Արդար լինենք մեր սիրելի հանգուցեալների գնահատման մէջ և անօգուտ չափազանցութիւններով չնսեմացնենք նրանց յիշատակը։

Գամբետտա չէր կարող լինել Ռուսինեանը—ոչ իսկ արևմտեան միջավայրում—քանի որ չունէր պահանջած արիութիւնն ու համարձակութիւնը։ Մի բռնաւոր նարատ կաշկանդել էր նրա բարձր, ազատատենչ հոգին, անդամալուծել էր ազգային վերածնութեան նրա թռիչքը։ Նա տառապում էր իր ցեղին, աւելի ճիշտ միջավայրին յատուկ մտավախութեամբ, աւելի ճիշտ՝ երկչոտութեամբ։

Ամուր գրկած Ֆրանսիական Յեղափոխութեան նշանաբանները, երկար տարիներ նրանց երազած ու գուրգուրած՝ նա, սակայն, դողում էր, երբ նոյն այդ նշանաբանների անունով փորձում էին հայրենի միջավայրում քիչ թէ շատ համարձակ քայլեր անել։ Ֆրանսիական գաղափարները այն աստիճան վառել էին նրա զգայուն սիրտը, Ռօբեսպիէռի և Դանտօնի պաշտամունքը այն աստիճան գերել էր նրա ամբողջ էութիւնը, որ նա դեռ ուսանողութեան տարիներում յօրինել էր նոր հայկական տարեցոյց, անուանելով ամիսները Ֆրանսիական Յեղափոխութեան ընդունած անուններով, թարգմանելով՝

Germinal	— *Floréal*	— *Prairial*	— *Thermidor*
Բուսին	— Դաշկին	— Մարգին	— Տօթար
(Ապրիլ	— Մայիս	— Յունիս	— Օգոստոս)
Fructidor	—	*Brumaire*	
Պաղար	—	Միգոն	
(Սեպտեմբեր	—	Դեկտեմբեր)։	

Սակայն, այդ բոլորը լոկ թէօրիկ զառանցանքներ էին—սիրուն, մակերեսային ու զարմանալի բառախաղ։ Յեղափոխութեան գաղափարը հանդիպել էր հայկական կրաւորականութեան գրանիտեայ ապառաժին։ Ռուսինեանը անդադար դուրս էր կոչում ուրուականներ և ինքն իսկ սարսափահար փախչում էր այդ ուրուականներից։ Նա պաշտում էր Յեղափոխութիւնը, բայց և, անշուշտ, զարհուրում նրա նիւթած արեան թափօրներից, նա կուզէր իր սեփական հայրենիքի ազատութիւն,— առանց, սակայն մի կաթիլ արիւնի։ Նա երկնել էր իր ընկերներով հայկական Սահմանադրութիւն, բայց «քաղաքական» բառն իսկ նա կուզէր դուրս վտարել ազգային շրջաններից...

Եւ Ազգային Ժողովի «սոխակ-բեմբասացը» սովորաբար նստում էր լուռ ու մունջ ազգի մեծ, հանդիսաւոր վայրկեաններին, երբ գաւառացի հայութեան աղիողորմ հեծեծանքը գալիս էր փոթորկելու Ղալաթայի անշուք խորհրդարանը... Երբէք, անգամ 70-ական թուականների տենդային օրերի մէջ, Խրիմեանի պատրիարքութեան տագնապալի շրջանում, «Կարմիր Տարեցոյցի» հեղինակը դուրս չ'ելաւ իր ակամայ պապանձումից, չ'արձագանքեց օրհասական ճիչերին, չմիացրեց իր պերճ լեզուի շանթերը հպմամգային բողոքին։ Նրա սիրտը խռովւում էր ժողովրդային տագնապով, բայց նա դէմ էր բողոքներին, նա կծկւում էր բռնապետութեան ստուերի հանդէպ, սարսափում էր հնարաւոր պատիժներից, գերադասում էր իր լքւած ու վիրաւոր ժողովրդի պէս հեծեծալ ու համբերել և կամացուկ երգել իր յօրինած սրտառուչ տաղը.

Երբ որ բացին դռներն յուսոյ
Եւ մեր երկրէն փախ տայ ձմեռ,
Զքնաղ երկիրն մեր Արմենիոյ
Երբ փայլէ իւր քաղցրիկ օդեր.
Երբ որ ծիծառն ի բոյն դառնայ,
Երբ որ ծառերն հագնին տերև,
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ, որ ինձ եռուր արև...

Ամբողջ սերունդներ կրթուեցին այդ տաղով։

Խե՜ղճ Ռուսինեան։ Մեռաւ, այդ երգը մրմնջալով, հրաժեշտ տուեց աշխարհին ձմրան ահեղ սառնամանիքների մէջ, ուր ծիծառն ոչ ծառերը սև էին հագել ամենուրեք, ուր հայրենիքը տնքում էր ամենածանր օրհասի տակ, ուր իր առջև փակւած էին «յոյսի» բոլոր դռները...

***

Վերադառնանք դարձեալ քառասնական թուականներին։

Կեանքի անիւը առաջ էր մղում գանդաղ, աննշմարելի թաւալումներով։ Եւ մամուլը, այդ կեանքի աղօտ ոչ դալուկ արտայայտիչը, սկսում էր կամացկամաց ոգի առնել և բառբառել օրինաւոր, մարդկային բառբառով։ Իրօք կարծես չկար իսկ նրա գլխին բռնապետութեան խարազանը։ Հայ մամուլը ազատ չէր, բայց ցենզօրի ճանկերում էլ չէր։ Այդտեղ ևս իշխող տարրը ցուցահանում էր իր արհամարհոտ համբերողութիւնը, ինչպէս բոլորը միւս ազգային հաստատութիւնների վերաբերմամբ — դպրոցի, եկեղեցու և այլն։ Սակայն, երկիւղը սարսափելի ու համաճարակ պատուհասի պէս, կաշկանդել էր հայ գրողի միտքն ու հոգին. երկիւղը՝ ազատ խօսքի գործածութեան և նրա հետ կապւած վտանգների ու հարուածների հանդէպ, նոյն երկիւղը՝ որ անդամալուծել էր Ռուսինեանների հայրենակարօտ ոգին, հայրենավրէժ կամքը...

Այնուամենայնիւ, հայ առաջին խմբագիրները խիզախում էին իրենց համեստ հրատարակութիւնների մէջ ազգային-հասարակական մի քանի խնդիրներ դնել ու արծարծել և մի քանի յորդոր ու հրահանգներ արձակել։ Մերթ ընդ մերթ Կ. Պոլսի, Զմիւռնիայի հայկական հրապարակագրութիւնը համարձակ թափ էր առնում, ասես իսպառ ազատագրւած բռնաւոր հսկողութիւնից։ Մերթ ընդ մերթ ազգի ու հայրենիքի մարտաշունչ նշանաբանները հնչում էին բարձրաձայն,

նեղվոտ ու աճապարոտ, ասես այն տխուր գիտակցութեամբ՝ որ ազատութեան այդ շրջանը վաղանցուկ է։ էֆէմեր, պատահական, որ նա շուտով պիտի տեղի տայ մտասպան և մարդասպան խաւարին...

Իւրաքանչիւրը հպարտ է իր ազգով — գրում է „Հայաստան“ թերթը 1846 թուին — որը՝ իր ազգի հնութեամբ, որը՝ իր հին գիտունութեամբ, որը՝ իր հարստութեամբ, ամեն մի ազգ իրաւունք ունի պարծենալու իր այս կամ այն յատկութեամբ... „Ոչ ոն զի նախախնամութիւնը ամեն ազգի մէյ մէկ յատուկ ձիրք պարգևէր է“... Մեր ազգը պարծենալու բան մը չունի՞ մի... Հայկին օրէն մինչև ասս օրս հայ անունով մնալը քի՞չ ազնուականութիւն կը համարուի իրեն. ահա ասով թող պարծի։ Մինչև հիմա հազար հազար մրրիկներու հանդիպեր, անոր զարհուրելի ալիքներուն դէմ մաքառեր զինքը անկործան պահելը քի՞չ արիութիւն կը համարուի իրեն. ահա ասով թող պարծի... Հիմա ալ դեռ աշխարհիս վրայ շատ ազգեր խորին քնի մէջ... իրեն արթննալը, ուսման յառաջադիմութեանը համար այսչափ ընկերութիւններ, դպրոցներ հաստատելը քի՞չ խմաստութիւն կը համարուի իրեն. ահա ասոնցմով թող պարծի... Ուրեմն... դո՛ւն, որ միշտ յառաջ երթալուն վրայ ես նէ, մի՛ յուսահատիր, մի՛ վհատիր, հապա յուսա՛, արիացիր և մի՛ ամաչիր Հայ եմ բսելու“...

Եւ ապա թերթը դառնապէս գանգատուում է հայոց օտարամոլութեան առթիւ... „Ռուսիա — ռուսերէն կը խօսին, Պարսկաստան — պարսկերէն, Թիւրքիա — տաճկերէն“... Ծանուցանում է վտանգը և մխիթարուում... որ „5 — 6 տարիէ ի վեր, շնորհիւ մի բուռն հայ մտաւորականներու, վարժարաններ կը հիմնուին և հայ աշակերտները հայերէն գրել-կարդալ ու խօսիլ սորվեցնելու կ՚աշխատին“ *)։

Մի ճառի մէջ, զետեղուած նոյն թերթի 1846 թ. 3 օգ.-ի համարում, — մի խանդավառ ներբող ուսման ու գիտութեան հասցէին... Դրանց մէջ է ազգի փրկութիւնը.

„Արթնցի՛ր, Հայոց Ազգ, այս մահահրաւէր տգիտութեան թմրութենէն, միաբդ բեր առաջին ունեցած փառքդ, ողբա՛ հիմակուան թշուառութեան վիճակդ, ուրիշ լուսաւորիչ ազգերէն օրինակ առ... Դպրատունները պայծառ պահելու ջանք բրէ, հայկական լեզուն աղէկ մշակէ, օգտակար լեզուներ և ազատական գիտութիւններ ուսանելու հետևէ... ասոնցմով միայն կարող կըլլաս երջանկութեան վախճանը հասնիլ“...

Գիտութիւնը — գերագոյն դարմանը։ Տգիտութիւնն էր, որ քանդեց Հայաստանի տունը.

„Ի՞նչ բրաւ հայոց տունն աւրող արիւնախանձ տգիտութիւնը... Բաւակա՞ն եղաւ, Հայաստա՞ն աշխարհ, բաւակա՞ն եղաւ այն անգութ բռնաւորին խրոխտ լուծին տակը չարաչար քաշած պանտխտութիւններս, արթնցի՛ր, բա՛ց գրկասուն սիրդ, ժողուէ ցիր ու ցան եղած զաւակները. ահա՛ բախտիդ նշոյլը ծագող բարեպատեհ ժամ. ահա՛ զուարճալի օրեր գուշակող սքանչելի գարնան դուռները, հալեցո՛ւր այն ատուածային հրովը երկնաբերձ լեռներուդ վրայէն պնդացեալ սառնամանիքը. կանանչագեղ զարդարէ բնութեան այն հրաշալի գեսերէն ջուր խմող դաշտերդ“... (14 դեկտ. 1846)։

Առաջին թռթռվանքներն են հայրենասիրական հրապակագրութեան, առաջին ուժեղ յորդորները՝ դէպի ազգային ինքնաճանաչութիւն.

Իսկ ի՞նչ է „հայրենիքը“.

„Այն տեղը, ուր որ մէկը աշխարհը կուգայ, ուր կայ իր նախնեացը նշխարներն ու դամբարանները. և այդ նախնեաց նահատակութիւններուն և ուրիշ բրած գործերուն յիշատակարանները“։ (Հայաստան“, 19 հոկտ. 1846)։

Ի՞նչ է անհատի պարտականութիւնը առ հայրենիքը.

„Պէտք է, որ մարդս գիտնայ ազգին համար իր շահը մոռնալ, իր ինչքը, ստացածքը, իր կեանքն անգամ ազգին ազէկութեանը և պատուոյն նուիրել“...

Սակայն... „մարդս իրաւունք չունի ազգին ազէկութեանը համար գէշութիւն մը ընելու կամ ուրիշի մը իրաւունքին դպչելու“...

Այս վերջին յայտարարութիւնը — ժամանակակից ինտերնացիոնալիզմի, միջազգայնութեան ոգով — մի սոսկ պատահար է, accident, որ գուցէ ակամայ դուրս է թռել հայ խմբագրի գրչի տակից, և որ յաճախ չի կրկնուում այնուհետև Թիւրքահայոց մամուլի մէջ։

Դրա հակառակ՝ աստիճանաբար և crescendo շեշտուում է կորովի, երբեմն նոյնիսկ տարամերժ, յարձակողական ազգասիրութիւնը — որ միանգամայն բնական է ազգային էվոլիւցիայի այն նախնական հանգրանում — բազմանում են հայրենասիրական խանդավառող յորդորները, հոլովուում է հարիւրաւոր ձևերով այն մեծ, վերացական գաղափարը, որ դարձաւ այնուհետև ամեն մի Թիւրքահայի նուիրական սրբութիւն, որի անունով երգուում է նա և այսօր.

— ԱԶԳԻ։

Հառերը — միշտ աւելի պաթեթիկ, յորդորները — միշտ աւելի մոլեգնոտ ու ռազմաշունչ։ Հեռագրեթե դուրս են կոչուում Արամեների ու Թորգոմների սուերները, խօսում են „հայկական մեծագործ ոգւոյն բնատուր ձիրքի“ մասին, յիշում են Եղիշէներին, Անյաղթներին, յիշում են „մարդկային ազգի խանձարուր Հայաստան աշխարհ“... Մի Թիւրքահայ ճամբորդ, վերադառնալով Անիի աւերակներից՝ ողբ է կարդում և հրաւիրում իր հայրենակիցներին՝ վրէժխնդրութեան (մասնաւորապէս, հայրենիքի ներքին թշնամիների դէմ)...

„Ո՜, ազնիւ հայոց ազգ, քաջապէս խորհէ վրէժ առնելու եղանակդ... Որչափ սոսկալի պատիժ տան նէ, արժանի է... Որդոց որդի, կոտակաւ աւանդէ մինչև յաւիտեան զանոնք խայտառակել և պատժել և վրէժ պահանջել“...

„Հայաստան աշխարհ՝ իր ամեն փառքերէն զրկուած, իր մեծութիւնները կորսնցուցած, երկիրները կողոպտուած, իրեն բարձր Արարատեան գլուխը տրամութեան մութ ու խաւար քողով ծածկուած“...

Ահա և մի խանդավառ յուշ ու ներբող՝ „Տանն Արշակունեաց“.

„Ո՜վ քաղցր անուն, Հայաստանեայց անցաւոր մեծագործութեանց հիմնագիր... քու փառքը ո՞վ կրնայ պատմել, ո՞ւր են քու զաւակներդ, ո՞ւր է քու անուանակիր ժողովուրդը քեզմէ մնացած... ո՞վ մնացորդք տանն Արշակունեաց“ *)...

*) „Հայաստան“, 27 յուլիս 1846 թ.։

*) „Հայաստան“, 14 փեբր. 1849։

Մի յորդառատ լիրիզմ և մի ջերմ, կարօտակէզ հայրենասիրութիւն, որ յիշեցնում են Լէօպարդիի սքանչելի տողերը *).

O, patria mia!... Dove la forza antica?
Dove l'armi e il valore e la costanza?
Chi ti discinse il brando?
Chi ti tradì?... Dove cadesti o quando
Da tanta altezza in così basso loco?...

Բայց ահա հայկական ազատասէր հայրենասիրութեան ձայնը հնչում է նոյնիսկ Լէօպարդիի հայրենիքից... Համաեւրոպական յեղափոխութեան հզօր արձագանքը հասնում է Վենետիկ, փոթորկում է Ս. Ղազարի չնաշխարհիկ անդորրութիւնը և մենաւոր խուցերից դուրս է կոչում երիտասարդ աբեղային—ամենից զգայուն և ամենից բանաստեղծ—որ սկսում է անհանգիստ ականջ դնել Արևմուտքից ու Հիւսիսից տեղացող բոմբիւններին և ապա բանաստեղծական ու ռազմական մի վսեմ յափշտակութեան մէջ առնում է քնարը, ուղղում իր վեհափառ և բոցափառ նայուածքը դէպի հեռու Արևելք, դէպի սարուկ, բազմաչարչար հայրենիքը և երգում.

Է՛հ, սթափեաց, սթափեաց աղէ զարթիր,
յո՛ւշ, յո՛ւշ քեզ Հայաստան,
. . . . . .
Նոր ժողովուրդք ի վեր ի վեր ելցեն, ի՞ցես դու վայրիվայր
Նոքա տիրք ազատացեալք, դու հէգ ծառայ, սարուկ, գերի,
Աշխարհ ամեն հրճուեալ, դու յանմխիթար
համակեալ սուգ **)...

Հայր Ալիշանն էր, հայոց սիրեցեալ նահապետը։

Ապստամբութեան ալիքը տարածւում է դէպի հարաւ, ողողում է Իտալիան, սպառնում է Վենետիկին... Ռումբերը որոտում են և մարտի գոռ աղաղակը թնդացնում է հինաւուրց հանրապետութեան շքեղ ապարանքները։ Հայր Ալիշան ականատես է այդ բոլորին, նրա դիւրավառ սիրտը ցնցւում է և հրդեհւում, նա փչում է իր սրինգը և հնչեցնում իր աննման ռազմերգի որոտընդոստ բոմբիւնները (1849 թ.)...

Հապ՝ օ՜ն ի զէն, գունդագունդ
Հեռեալ ի պար թունդ ի թունդ
Ի զէն ի վրէժ օ՜ն անդր յառաջ
Ի զէն ի վրէժ, մի ձախ մի յաջ. . .

Հայաստանի անմխիթար զաւակի վշտաբեկ կուրծքն է, որ գոռում է, մռնչում և գունդագունդ ի զէն, ի վրէ՜ժ հրաւիրում „հայրենավրէժ հայկազունները“, „արի արանց մանկունքը“...

Ահա և Մեծ ու Փոքր Մասիսի յուզիչ դեալոգը (երկխօսութիւն)—մի հոյակապ յղացումն, կատարուած նոյն վենետիկեան անցքերի ազդեցութեան տակ, (1849 թ. մարտ 2).

Աւագ Մասիսը—գոռոզ, ահեղ և յանդուգն, մառուած հրաբխային, աշխարհաւեր տրամադրութեամբ. Փոքր Մասիսը—երկչոտ, հեգնող ու յոռետես, միանգամայն յուսահատուած Հայաստանի ապագայի վերաբերմամբ։ Աւագ Մասիսը ինքը Ալիշանն է, ապստամբութեան գաղափարի խորհրդանիշը և նրա մոլեգին արծարծողը, որ պատրաստ է խորտակելու ամենահաւոր խոչընդոտները և վերադարձնելու հայրենիքին կորուած փառքը.. Նա գալոց անխուսափելի „ցնցումների“ գուշակն է, խորաթափանց և լաւատես մարգարէն... Փոքր Մասիսը հակայեղափոխական տրամաբանութեան թարգմանն է, ստրկութեան և անշարժութեան պատգամախօսը, որ ի վերջոյ ընկճւում է, յետ նահանջում աւագ եղբօր որոտաձայն, անդիմադրելի շանթերի առջև.

Ինձ մտիկ արէք, լերունք դուք հաւատար,
. . . . . .
Ես Արարատեան եմ Աւագ Մասիս
Ազնիւ քան զամեն լերունք աշխարհիս...

Եւ ցոյց է տալիս իր դժոխային կուրծքը, սպառնում է կրակ ու բոց ժայթքել, հեղեղել ամբողջ շրջապատը, „սասանեցնել զԱրարատն Հայոց“ և վա՜յ է գոռում, ով դէմ կը կանգնի...

Կրտսեր եղբայրը հեգնում է այդ ոլիմպեան յոխորտանքը, հասկացնելով, որ ամեն ինչ վերջացած է, որ Մասսի հսկայ և չքնաղ բուրգը սոսկ մեռելութեան մի յուշարձան է...

Զեմ, չեմ այլ փառաց ու բաղդի նշան,
Այլ մեռելութեան հայոց մահարձան.
Գան գընան դառնան ալիք գետերուն
Չի դառնար որդոց՝ պարծանք հայրերուն։

Աւագ Մասիսը.

Մի՛ այդպէս ասիր, Սարուկ, մի՛ այդպէս.
Մի՞թէ քան զԱւագ դու լաւ կը տեսնես.
Ես իրք կը տեսնեմ քանց քեզ առաւել,
Ցերեսէն Հայոց փառքն չէ կորել։

Բայց... „քո դուրսը ձիւն է, ներսը՝ պաղուկ քար“—առարկում է Սարուկը։

Ով խոր կու նայի, թող պինդ խոր մտնու...

Պատասխանում է աւագ եղբայրը և յիշեցնում է իր հիւրախային ծագումը.

Գիտես թէ մարած է զինչ հին կանթեղ
Բայց թէ տամ քըշէկ մի քուքուրդի դեղ՝
Ցանկսած դաշտերդ ամեն ի ման գայ,
Դու այլ հետ լերանց դողաս զինչ տըղայ...
Թէ ուզենամ նոր կանգնեմ ես տարեր,
ՅԱրագած դեսպան ղրկեմ բարկ քարեր...

Ահա և ազատութեան կուռքի վերջին խորհրդաւոր ազդարարութիւնը.

Ինձ մտիք արէք լերունք դուք հաւատար...
. . . . . .
Երբ յետ դարերու առաջին անգամ
Ես Աւագ Մասիս ներսուց որոտամ,

*) *Leopardi: All'Italia*, (1818 թ.).

**) „Բանք Վահրամայ Պահլաւունոյ“ ուսանաւորից, գրուած 1848-ին, փետրուարեան յեղափոխութիւնների անմիջական ազդեցութեան տակ։

Կանչեմ ու շնչեմ, արձակեմ ծուխ բոց
Սառանկցրնեմ զԱրարատն Հայոց
Այս բլրի նշան Հայոց աշխարհին,
Թէ գայ ժամանակ, որ գան փառքն այլ հին...

Այդպէս էր սրտում Հայոց ապստամբութեան խիզախ երգիչը։ Ոչ ոք, գուցէ ոչ մէկը Հայ բանաստեղծներից այնքան յուզիչ շեշտերով չի լացել Հայրենիքի աւերակները, նրա մարած փառքերը, և ոչ ոք այնքան ուժով ու մոլեգնութեամբ, այնքան սուրբ, անկեղծ ոգևորութեամբ չի հնչեցրել այդ փառքերի յաղթական բամբը...

„Աւարայրի բլբուլը“, մեր պատմութեան գեղեցիկ դրւագների երգիչը, մեր սարերի ու ձորերի ոլիմպիական սրընգահարը իր սրբազան խանդավառութեամբ կեանք ներշնչեց այդ սարերին ու ձորերին, այդ թփերին, աւերակներին և իր սրտառուչ ձայնով — մերթ յուսահատ և լալկան, մերթ զւարթ ու մոլեգին — լացացրեց ու ոգևորեց սերունդներին, յոյս ու խրախոյս ներշնչեց վիթխարի փլատակների հանդէպ, դուրս կոչեց այդ փլատակներից Հայաստանի ոգին, արծարծեց Հայրենիքի և ազատութեան պաշտամունքը և ձգտեց յաղթահարել վախի, յոռետեսութեան ազգադաւ հոսանքը, երգելով բարձրաձայն, ինքնավստահ.

Հայո՜ց աշխարհիկ, գարունդ է հասել,
Ահա գեղեցիկ գարուն քո եկել...

Ինչպէ՜ս պիտի ցաւէր, կսկծար այդ ազնիւ, գերզգայուն սիրտը 1895 – 96 թւականներին, երբ Զուլումի համայնաջինջ արհաւիրքում խաւարել էին ազատարար „գարունի“ վարդագոյն արշալոյսները...

Դառն էր, անտարակոյս, Հայոց Նահապետի յուսախաբութիւնը։ Ի՞նչ արած... Հայր Ալիշանը այնուամենայնիւ, չէր կարող նզովել հայկական ըմբոստացումը, որ ինքն էր կոչել այնքան խանդագին ու պաղատագին, որ ինքն էր նուիրագործել իր հոյաշունչ, սթափեցուցիչ քնարով, իր գոռ մռնչիւններով... Այդ ըմբոստացումը, այնուամենայնիւ, մնում է անպարտ՝ թէ խղճի, թէ մտքի առաջ, նա մնում է բնական և բանական իր ծագման ու զարգացման մէջ, ինչպէս որ բնական էր Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնը, չնայած Ռոբեսպիէռեան Տերրորի խօլական արհաւիրքներին, արեան հսկայ շատրուաններին, հազարաւոր անմեղների գլխատումներին և, ի վերջոյ, յաղթանակող ռեակցիային...

Եթէ կայ հայ յեղափոխականի մեղսակցութիւնը Հայկական Զուլումի մէջ, ապա Ալիշան և Խրիմեան—երկուսն էլ ընդվզումի և ազատութեան հոյատիպ շեփորողներ—բաժանում են այդ „մեղսակցութիւնը“, բաժանում են ըմբոստացման հետևանքի պատասխանատուութիւնը՝ Հայ Յեղափ. Դաշնակցութեան հետ, Հնչակեան կուսակցութեան հետ, Արմենական կուսակցութեան հետ։

Եւ... կարմրելու տեղիք չունին այդ պաշտելի դէմքերը։ Նրանք կատարել են իրենց պարտքը ժողովրդային ծովածաւալ տառապանքի ու վշտի հանդէպ, կատարել են այն ձևով, ինչ ձևով թելադրել է իրենց խիղճը և համաշխարհային պատմութեան ձայնը։

Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

ԹԻՐԹՕՆ

ԱՒԵՐԱԿՆԵՐԻ ԺՊԻՏԸ

(ՇԱՄԲՈՒ ՑՈՒՇԵՐ)

Աշնանային էքնաղ երեկոյ է, անուշ ու երազուն. լոյսերի, գոյների, կիսաստուերների մի երեկոյ, երբ մարդ լսում է հանգչող բնութեան մեղմ հեքը և թօշնող խոտ ու տերևի տարտամ մրմունջը։

Առջևս փռուած է մի ծով հարթութիւն. Խալդական լեռնաշղթան և կարմիր բլուրների քմահաճ շարաններ փակում են հորիզոնը, ուր ցոլքերի, երանգների մի անծայրածիր, բիւրածալ շղարշ՝ թրթռում է, բացւում ու կծկւում, եռում ու փուում։ Շքեղ ու բեղուն դաշտը թախծոտ՝ որպէս այրի հարս, հեռուն փարում է հորիզոնին, լեռներին, բլուրներին։

Թիկունքիս Վարդահան գիւղն է *), շուրջս հին-հին գերեզմաններ ու աւերակներ։

Բազմաթիւ աւեր եկեղեցիներ փռուած են հարթութեան վրայ, որը տակաւին կանգուն՝ իր մի հատիկ կամարին յուսահատ ճիգով յենած՝ վերահաս ու անխուսափելի անկումի սարսափը ճակտին, որը ընկած մի կողքի, պարտուած հսկայի պէս և գլուխը վար դրած հողերի մէջ, այլ ևս երբէք չբարձրացնելու համար. ուրիշները անձև, այլանդակ քարակոյտ, շարունակում են սակայն երկնքի ճակտին ցցել մի սիւն, պատի մի կտոր, որպէս ցասումի կարկառուն բազուկներ. կան և այնպիսիները, որոնք իսպառ հողին հաւասարուած, տրորուում, փոշիանում ու անհետանում են ուժեղ հովերի անողորմ շնչով։

Արուեստի, զգացմունքի, գերագոյն հաւատի բոլոր այս արտասուելի բեկորները լռելեայն խոկում են իրենց վիրաւոր, իրենց արիւնոտ ու ծանր խոհը։

Եւ աւեր եկեղեցիների շուրջը, նրանց մխացող ծոցում, նրանց թևերի տակ, փռուած են ցաք ու ցրիւ բազմաթիւ շիրիմներ, նօսր ու խղճուկ խոտեր, նիհար, դեղնած ծիլեր փարել են մամռապատ քարերին և կամացուկ սլսլում են երեկոյեան հովի թեթև շնչով։

Առջևս կանգնած է ծերունի նախարարը, այս տրտում թումբն, իր երկար գաւազանին յենած՝ և յամառաբար

*) Բաբերդի շրջանում Տրապիզոն տանող ճամբու վրայ։

նայում է գետին, իր ոտների տակ։ Ժամեր է՝ ինչ միասին ենք և նա միշտ այդպես է։ Վեր է նայում միայն այն ժամանակ, երբ պատասխանում է հարցիս, ապա կրկին ծնօտը յենում է աջ ձեռքի գաստակին և երկուսը միասին իր գաւազանին, ու մնում է լուռ, աչքերը մի կէտի յառած։

— Ի՞նչ ես փնտրում ոտքերիդ տակ, ա՛յ ծերուկ։

Նա գլուխը բարձրացրեց, թաւ յօնքերի տակից վրաս թարթեց խորը աչքերը, ու հակիրճ ձևով ասաց.

— Հէ՛չ։

Ու կրկին նրա ալեզարդ գլուխը, թաւ ճերմակ միրուքն իջան գաւազանին։

Առաջ անցայ դէպի մի նորակառոյց շէնք, որի պերճ զանգւածը, ինչպէս մի մեղմանուշ ժպիտ փթթում է այս աւերակների ու գերեզմանների վրայ։

— Դպրոց է, ասաց Թումոն, երկու տարի կայ ամենքս էլ քար ու կիր կը կրենք... խէրով գործ ա, ինչ կայ որ, ամա կասեմ փէրիշան կէնեն անիրաւները... Կը տեսնաս էսա ժամերէ քսան երկու ժամ կայ, մեր պապերն էլ քրտինք են թափեր, քար ու կիր կրել, Աստծու տուն շիներ, աղօթք արեր.. էլման փէրիշան, մեր վախթանը համա փէրիշան, ֆայդայ չկայ... էսա երկիր փայդայ չունի։

— Թումո, չէ՞ հիմա ազատութիւն է։

Պատասխանի փոխարէն այս անգամ Թումոն լուռ արգահատանքով նայեց ինձ, ինչպէս նայում են անոյշ միամիտներին, ու գլուխն օրօրեց.

— Վա՛խ, խայեր, ասաց նա քիչ յետոյ, ու ես չհասկացայ, թէ ի՞նչ էր այդ բացականչութեան իմաստը։

Մտանք մի աւերակ եկեղեցի։

— Սուրբ Սարգիսն է, ասաց Թումոն այնպիսի ձևով, ասես ծանօթացնում էր ինձ առջևս կանգնած մի կենդանի մարդու հետ։

Ութանկիւնանի մի հրաշակերտ է այդ Ս. Սարգիսը. ժամանակն ու բարբարոսները կրծոտել են գեղարուեստի այդ աննման կոթողը, բայց էլի ինչ որ մնացել է, վշտախառն ու անհուն հիացմունքի աղբիւր է։

Մեր ոտնաձայներից աղաւնիները խրտնած երամով խոյս տուին և անցան դէպի միւս աւերակները։

— Աղաւնի շատ կայ... ասաց Թումոն, բուեր էլ կան... Գիշերը կը վայեն, լրացրեց նա թաւ ձայնով ու ծնօտը դրեց գաւազանին։

Արևը մայր մտաւ, երեկոյեան մշուշն իջաւ, բայց ես ու Թումոն դեռ եկեղեցումն ենք։ Աւեր, լայն լուսամուտից երևում են Խալդական լեռնաշղթայի հսկայ ստւերները և նրանց ոտների տակ կարմիր բլուրները, որոնք կամացուկ մաշւում, լուծւում են կիսախաւարի մէջ։ Աւելի մօտ, հարթութեան վրայ մի հատիկ ծառ է օրօրւում արտերի մէջ և նրանից վեր մի պատառ ամպ է լողում տարտամ, վարանոտ ճամբորդի պէս, որ իր մոլար ճամբան է փնտրում անհունի մէջ։

Ընկնող ցորենների խշշոցը և մանգաղի մեղմ զրնգոցը մեզ է հասնում հովի թևերով և գիւղացիք դեռ հընձում են, դեռ վաստակում են...

Աւերակների շուրջն իշխող այդ աշխատանքը, որ կեանք ու կենդանութիւնից, յոյս ու եռանդից է խօսում, պարարիչ խոհերով համակում է իմ հոգին և զրնգոցը գերանդու, և խշշոցը խուրձերի, և մեղմ զրոյցը հնձւորների, բոլորը միասին մի իմաստ են ստանում, որ հեգնում է մահը, աւերածը, յուսաբեկութիւնը։

— Ջա՛րկ, ջա՛րկ այդ գերանդին, ո՞վ քրտնաջան վաստակաւոր... Թո՛ւմո, Թո՛ւմո, հունձն աղէ՞կ է այս տարի։

Թումոն գլուխը բարձրացրեց, նայեց հեռուն։

— Է՛հ, աղէկ՝ գէշ, մէկ չէ՞, ասաց նա, դատողն ո՞վ, ուտողն ո՞վ. ու ծեր գլուխն այս անգամ զայրոյթով իջաւ գաւազանին. էլ չէի տեսնում դէմքը, բայց խաւարի մէջ դեռ լսւում էր նրա ձայնը. Թումոն խօսում էր ինք իրան, կամացուկ.

— Համա փէրիշան ենք... Բռնաւորի օրով փէրիշան, ասին ազատութիւն էկաւ.. էլի փէրիշան... է՞հ, ֆայդայ չկայ...

Մռա՜յլ, անհամբոյր ծերուկ... Նրա այդ թաւ ձայնը խաւար, աւեր եկեղեցու մէջ, ինչպէս գերեզմանից՝ ճընշում էր ինձ։

Դուրս եկայ։

Արևելքում բանձրացաւ լուսինը. և նրա գունատ ցոլքերի տակ աւերակների երկարուն ստւերները սգացող եղերամայրերի պէս իջան, գերեզմանների վրայ փռւեցին. ու լռութիւնը դարձաւ այնպէս խորունկ, այնպէս խոհուն. հովն է հեծեծում աւերակների մէջ, թէ՞ մէկը իրօք լալիս է. շուրջս նայեցի... միայն Թումոն էր առաջս միշտ իր հաստ գաւազանին յենած ու աւերակները լուսնի պաղ ցոլքերով սքօղւած՝ որպէս ճերմակ պատանների մէջ. կարծես դողդողում են, գալարւում և խորհրդաւոր եղերամայրերը շարունակում են փարել հինաւուրց շիրիմներին։ Հեռուն, լայնարձակ դաշտում գունատ կիսաստւերներ, թրթռուն լոյսեր խաղում են, իջնում, բարձրանում, որպէս անհանգիստ, հալածական ոգիներ։ Ու ականջիս հնչում են մայլ ծերունու ջարագուշակ խօսքերը.

— Ֆայդայ չկայ, փէրիշան կէնեն...

Շինարար, բայց ընկճւած, պարտւած ցեղի կսկիծի ճիչն է այն, որ բարձրանում է աւերակներից, գերեզմաններից։

Նստեցի մի քարի վրայ ու անձնատուր իմ խոհերին՝ նայում էի հեռուն։ Թումոն կրկին մնաց կանգնած, կրկին նայում էր ոտների տակ ու ասես իսպառ մոռացած իմ ներկայութիւնը, խօսում էր ինքն իրան.

— ... Էլի գիշեր էր, էլի լուսընկայ, էլի հով ու զով.. վա՛խ խայե՛ր.. աշխատանքից դարձանք, էլի արտ ու հունձ կար, ցանք ու վաստակ, դարձանք ու էսա սև փոսը փորեցինք...

Թումոն գլուխը բարձրացրեց ու գաւազանով ուժգնորէն հարուածեց գետնին, ուր սովորական մակերևոյթից մի փոքր ցածր, բաւական ընդարձակ քառակուսի ծածկուած էր թանձր խոտերով.

— Հա, աշխատանքից դարձանք, էլի էսա իրիկուան պէս խորոտ իրիկուն էր, չորս դեհէն վրաներս էկան մեր հարևանները՝ թիւրք, էրքեզ... Ու հարիւր տասներեք տղամարդ ընկան էս վերան գեղից. համա էսա փոսի մէջ պարկած են.. Հարիւր տասներեք տղամարդ, վա՛խ, վա՛խ... հանգի՛ստ ձեզ, հանգիստ ձեզ խեղճ ջահիլ-ջիւանները...

Ոտքի ելայ, առաջացայ դէպի այդ սև վիհը, ուր կանգնած էր Թումոն, գլուխը բաց, ճերմակ մազերը հովին տուած և լուսնի ցոլքերի տակ գունատ ու խորհրդաւոր, որպէս ստուեր ու մեղմիւ սրբում էր աչքերը...

— Կ'ըսեմ ֆայդա չկայ, փէրիշան կ'էնեն... աշխատանքից ֆայդայ չկայ էսա վերան աշխարքի մէջ։

Սասանւած էի...

Տասնեվեց տարի առաջ կատարւած Մեծ Եղեռնի մի արիւնոտ դրւագն էր այս, որ անողորմ, դառնացած ծերունին, որպէս ջախջախիչ փաստ իր յուսաբեկութեան՝ առջևս հանեց։ Ու ինքս էլ Թումոի պէս ոտներիս տակն էի նայում, այս ազազուն, չորացած խոտերին, որոնք ծածկում էին այնքան մատաղ կեանքեր վաղաժամ չորացած։ Ոտներիս տակ հողն էր եռում ու խոտերի ու քամու շշունջն ու սլսլոցը հոգուս մէջ հնչում էր, որպէս կենդանի զրոյց, մի սև հեքիաթ, որ ասես ոչ սկիզբ ունի և ոչ վախճան։

Գլուխս բարձրացրի, Թումոն էլ կողքս չէր. մերթ ծածկւելով ստւերների մէջ և մերթ լուսնի շողերով ողողուն, նա երերալով գնում էր դէպի գիւղը, ապա իսպառ ծածկւեց։

Հեռո՞ւն, բաց հարթութիւնը դողդոջ աստղերի տակ՝ լուսնի արծաթ մշուշի մէջ հևում էր մեղմիւ, աւերակները սրթսրթում էին իրենց լուսացնցուղ ճերմակ պատների մէջ, առջևիս մահաշուք փոսը լուռ մխում էր ինչպէս մի հսկայական սև վերք մայր երկրի կրծքին, և քիչ անդին՝ դպրոցի շէնքն էր բարձրացնում իր սպիտակ զանգւածը, որպէս հմայիչ ժպիտ։

Կեանքի, լոյսի ժպիտը, որ իշխում էր մահւան աւերածի, յուսաբեկութեան վրայ։

Ներից նստեցի մի քարի վրայ, գլուխս ձեռքերիս մէջ առայ և մեր պատմութիւնը, մեր ցաւագին պատմութիւնը իր բոլոր արիւնոտ յեղյեղումներով, որպէս յոգնած վիրաւոր ուղտերի կարաւան, եկաւ անցաւ աչքիս առաջից։ Այս աւերակները, այս մահաշունչ փոսը, ուր հարիւր տասներեք մատաղ կեանքեր են հանգչում, այս հոյակապ դպրոցն իր ժպտով և այն դժբախտ թումոն իր մահագուշակ „փէրիշանով" մեր ամբողջ պատմութիւնը չէ՞, մեր դաժան, մեր անողորմ պատմութիւնը։

Ցամաք աշխատանք, ստեղծագործելու, կերտելու անսպառ եռանդ, մտքի, արւեստի սքանչելի խոյանքներ և յետոյ... անակնկալ, վայրագ աւերած բարբարոսների ձեռքով, ողբ, յուսաբեկութիւն, գերեզմաններ, մի ամբողջ աշխարհ՝ քար ու քանդ, մի ամբողջ ազգ՝ բռնաւուեր, փէրիշան... ու կրկին վերաշինութիւն, կրկին յամառ ու անդուլ աշխատանք, և՛ մուրճի շառաչ, և՛ մանգաղի զրնգոց, և՛ զիլ երգը հոտաղի, և՛ հօրովելը շինականի... մինչև մի նոր աւերած...

Եւ այսպէս դարե՛ր, դարե՛ր, դարե՛ր...

Ո՛չ, ծերո՛ւկ, դու անողորմ ես, մի քամիր մեծ, պարարիչ յոյսի վրայ քո դառնացած, քո տանջւած հոգու թոյնը. փէրիշան կ'անեն, էլի կը շինենք, կը խորտակեն, կրկին կը բարձրացնենք, մինչև որ բարբարոս, արիւնածարաւ կատաղութիւնը ինք զինքը լափի ու չքանայ, մինչև որ մոլեգին վայրագութիւնը իր սեփական միսը բզկտի ու ընկնի լեշացած, մինչև որ յաղթանակի արդարութիւնն ու իրաւունքը։

Եւ կը յաղթանակի, որովհետև անիրաւութիւնն ինքն իր մէջ է կրում իր մահը, որովհետև քանդումը, աւերը գերեզման է յափշտակիչների ու աւերիչների, ջարդարարների։

Հնձւոր տղամարդիկ ու կանայք դանդաղ ու լուռ շարանով եկան ու անցան առաջիցս։ Նրանց գերանդիներն ու մանգաղները փայլփլում էին լուսնի ցոլքերի տակ, կայծկլտում ու ժպտում աստղերին, երկնքին...

Ու յարգանքի, պաշտամունքի մի հզօր զգացմունք համակում է հոգիս դէպի այս լուռ վաստակաւորները, որոնք չգիտեն, չեն էլ գիտակցում, որ իրենց անյայտ ու համր ճիգերով լռելեայն զարգարում են շինարար, զգաստ ցեղի ամենէն վսեմ աւանդութիւնները, աշխատանքի, ստեղծագործութեան դիւցազներգութիւնը։

Ո՞վ քրտնաթոր, վաստակաւոր ժողովուրդ, որ հարիւր տասներեք խողխողած զաւակներիդ վիշը հոգումդ և արդար ցասումն ատամներիդ տակ փշրելով, դեռ գիտես ցանել, հնձել, վաստակել, գիտես բարձրացնել այս իսկ աւերակների մէջ լուսոյ հսկայ այս կառուցւածքը... ա՜հ, դու պիտի կարողանաս նաև յաղթանակել, և՛ բարբարոս, արիւնախանձ բռնութեան ողնաշարը խորտակել։

Կերտի՛ր, կերտի՛ր, ո՞վ քրտնաթոր ժողովուրդ ու ծառացիր նաև, որ քո ստեղծագործական ճիգերի հոյակապ կառուցւածքը փէրիշան չ'անեն բարբարոսները։

ՏԱՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՅՈՅՍԵՐ ԵՒ ՅՈՒՍԱԽԱԲՈՒԹԻՒՆՆԵՐ

—

„Ռուսաստանը իր ձեռքն է առնում հայկական դատը“, „ռուս կառավարութիւնը պիտի դնէ հայոց հարցը Լօնդօնի դեսպանաժողովում, պիտի պահանջէ լայն ռէֆօրմներ, ինքնավարութիւն, ավտօնօմիա“... Մի ամսից ի վեր պաշտօնական ու կիսապաշտօն օրգաններ, կաթողիկոսական պատուիրակներ և մասնաւոր անհատներ տարածում էին եռանդով այդ լուրերը... Ամենէն սկեպտիկներն անգամ ստիպւած էին մի վայրկեան հաւատալ ու մտածել, թէ՞ մի՞ գուցէ յիրաւի „նոր կուրս“ է սկսւում հայոց հարցի նկատմամբ Պետերբուրգեան շրջաններում, մի՞ գուցէ, վերջապէս, Ռուսաստանի վարիչները համոզւել են, որ ժամանակ է դադարեցնել հակահայկական քաղաքականութիւնը և փոխանակ արգելք լինելու Թիւրքահայոց ռէֆօրմների իրագործման—ինչպէս որ եղել՞է՝ լօբանօվեան օրերից ի վեր—նպաստել այդ չարատանջ հարցի լուծման, չը գրգռել երեք միլիօն հայ ժողովուրդը, որ ամեն տեղ հանդիսանում է ռուսական կուլտուրայի ու առաջխաղացութեան դրօշակակիր...

Բայց ահա արդէն ծայր է տալիս յուսախաբութիւնը և նոյն ռուսական պաշտօնական անձերն ու օրգանները, հայերին հանգստացնելով, համբերութեան յորդորներ տալով հանդերձ՝ շեշտում են, որ Լօնդօնի դեսպանաժողովի օրակարգի մէջ՝ տեղ չկայ հայկական խնդրի համար...

Դարձեալ rolte-face... Ահագին աղմուկ, թմբկահարում, խոստումներ ու խրախոյսներ, կաթողիկոսական յայտնի, ցուցարար պատրաստութիւններ, յաչս ամբողջ Ռուսաստանի ու Եւրոպայի— և դարձեալ... լեռը մուկ ծնեց։ Հայաստանը սոսկ կարմիր խրտիլա՞կ էր, որ Պետերբուրգը ցուցադրում էր Աւստրիային ու Գերմանիային՝ մղելու համար վերջիններիս դէպի զիջող քաղաքականութիւն՝ բալկանեան սլավօնների վերաբերմամբ... Թէ գուցէ ա՞յլ „ծրագիրներ“ կան...

Այսպէս թէ այնպէս, դա մի նոր ու դառն փորձութիւն էր մեր մի կարգ հայրենակիցների համար—մի պաղ ջրցան...

Ցուսախաբութիւնը աւելի ևս ծանր ու ճնշող հանգամանք է առնում՝ քիչ առաջ հրապարակ նետւած սէնսասիօն տեղեկութեամբ, որ բառ առ բառ ծանուցանում էր

„Ռուս կառավարութիւնը դիտաւորութիւն ունի մտցնելու Պետական Դումայի մէջ առաջարկ՝ վերաքննել „Պոլօժենիէ“ն... այն մտքով՝ որ Հայոց Կաթողիկոսի գործունէութիւնը համաձայնեցւի պետական իշխանութեան պահանջների հետ։ Եւ դրա հետև Պոլօժենիէի հետ կապւած են Ռուսաստանի հայ ժողովրդի հոգևոր-մտաւոր-բարոյական կարիքներին դոհացում տւող շատ հաստատութիւններ, ինչպէս դպրոցը, ընտրական սիստեմը, ուստի պարզ է, որ Պոլօժենիէի վերաքննութեան խնդիրը մի առանձին կարևորութիւն է ստանում հայերի համար“...

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

—

Ողջունելի են Եւրոպայի մեր հայրենակից ուսանողները, որ կամեցան արձագանք տալ համազգային տրամադրութեան և հաւաքւեցին — թէև սահմանափակ թւով — խորհելու իրենց ձեռք առնելիք միջոցները, վայրկեանի պահանջների համեմատ։ Խորհրդաժողովը տեղի ունեցաւ Լօզանի մէջ, մասնակցութեամբ Պարիզի, Նանսիի, Ժընէվի և Լօզանի պատգամաւորների։ Խորհրդակցութիւնը տևեց երկու օր, ընկերական լիակատար համերաշխութեան մէջ։

Ընդունւած որոշումները բազմաթիւ են. ահա նրանցից մի քանիսը.

1. Պրոպագանդ անել արևմտեան մամուլի մէջ՝ հայկական խնդիրն արծարծող յօդւածներով։
2. Աշխատել կազմակերպելու միթինկներ ու դասախօսութիւններ՝ այլ և այլ քաղաքներում։
3. Պարտադրել իւրաքանչիւր քաղաքի ուսանողական միութիւն՝ իր միջոցներով տարածելու Պարիզեան ֆրանսերէն թերթը։
4. Ձեռնարկել ուսանողութեան ու գաղութների մէջ դրամի հանգանակութեան և յատկացնել նպաստները Թիւրքահայ ժողովրդի ինքնապաշպանութեան։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

—

Քաղում եմք մի քանի տեղեկութիւններ խմբագրութեան մէջ սացւած վերջին նամակներից.

Վան, դեկտեմբ. 16

Դանը տպաւորութեան տակ վերադարձան մեր հազար գիւղացիները, որ Ռաֆայէլի սպանութիւնից յետոյ թափւել էին քաղաք և դիմումն արել կուսակալին։ Դրական ոչ մի արդիւնք այդ դիմումներից։ Զզւած ու վրէժով լցւած, տուն դարձան և արիւնը արիւնով լւացին, այն էլ իրենց ձեռքով... Իմացաք արդէն, որ Ռաֆայէլի սպանիչներէն գլխաւորը, Հաջի Եաղուբ, իր որդին Ռաշօ, մէկ ոստիկան և չորս ուրիշներ սպանել են հայերի ձեռքով, Խրոխտենց գիւղի մօտերը։ Կառավարութիւնը իսկոյն խուճապ հանեց—այն կառավարութիւնը, որ մատը մատին չխփեց Ռաֆայէլի դահիճներին պատժելու համար... Վ.ալին հարիւրաւոր զօրք, ոստիկան ու յատուկ քննիչներ ուղարկեց Կառկառ՝ քննութեան համար։ Բայց... բնութիւնն ինքը արգելք եղաւ. ճամբաները գոցւած են։ Սատանան չի կարող այժմ

մտնել Կառկառի խորքերը։ Հայերու կողմից բան չի եղել, ամբողջ Խրոխտենց գիւղը փախել էր մոտակայ գիւղերը։ Հետևանքը շուտով կը պարզուի։

Դէպքի տպաւորութիւնը շատ լաւ է հայերի մէջ և շատ ծանր՝ կառավարութեան վրայ։

Կառավարութիւնը, մասնաւորապէս վալին, որ մի վատ քիւրդ է, սկսել է պրովոկասիոններ։ Իբր թէ հայերի մէջ կան ռուսական գործակալներ...

Ա—Մ

Էրզրում, 11 դեկտ.

Հայաբնակ վայրերի մէջ... տագնապը արձակել է բոլոր սանձերը։ Ժողովրդի տականքները, թալանչի խուժանավարները մի յարմար առիթի են սպասում՝ մասսային ջարդեր սարքելու... Առ այժմ խաղաղ, արտակարգ ոչինչ չկայ։ Ասում եմ արտակարգ, որովհետև անհատական սպանութիւնները, մասնակի կողոպուտն ու թալանը այս քամբախտ երկրի համար վաղուց ի վեր սովորական երևոյթների շարքն են անցել և մարդիկ կարծես հաշտուել են դրանց հետ...

Որ քրդերը չափազանց երես են առել Վասպուրականում, դա ճիշտ է։ Նկատելի են քրդական շարժման նախանշաններ բացարձակապէս ըմբոստանում են կառավարութեան դէմ։ Լուր կայ, թէ մի գաղտնի ձեռք ղեկավարում է այդ շարժումը... „Քրդական վտանգը“ քանի գնում—լայն ծաւալ է ընդունում։ Թիւրք կառավարութիւնը—վախից է արդեօք—ի տեղի զսպելու, կոկետութիւն է անում քրդերի հետ, ամեն կերպ սիրաշահում է...

Աւելացրէք և այն՝ որ թիւրք խուժանը ևս սկսում է գոռգոռումի վտանգաւոր նշաններ ցոյց տալ, Թիւրքիոյ պարտութեան լուրերի ազդեցութեան տակ...

Առ այժմ կրքերը զսպած են երևում. ի՞նչ կը լինի վաղը... գուշակել դժուար է։ Կարնոյ դաշտի ժողովուրդն ևս չափազանց անհանգիստ է։ 1895-ի ջարդի մղձաւանջը այսօր էլ ճնշել, պաշարել է հայ գիւղացու միտքը։ Թիւրք գիւղերի մէջ նկատուած են „ՋՀԱԹ“ի ագիտատորներ...

Ֆ—Ֆ

Կիրասուն, 5 դեկտ.

Նոր թոզի երկիրը... Անիշխանութիւնը կատարեալ է։ Ապրում ենք չափազանց կարևոր մի ժամանակաշրջանում. 1908-ի Թիւրքական յեղափոխութիւնից ի վեր, սա ամենածանրակշիռ մոմէնտն է, մասնաւորապէս հայերիս համար... Հայկական գաւառների մէջ թալանն ու սպանութիւնը սիստեմատիկ բնոյթ ունին։ Քրդերը այլ ևս ոչ մի կարևորութիւն չեն տալիս իշխանութեանը, նրանց յանդգնութիւնը հասել է այնտեղ, որ հայերի վրայ ձեռք են բարձրացնում անգամ կառկառ գաւառի մէջ, ուր հայ տարրը նոյնիսկ հին ռէժիմի ատեն ուժեղ է եղել և գրեթէ ազատ բռնութիւններից։ 16 խոշոր հայ գիւղերի դիմաց կան ընդամենը 4—5 քրդական գիւղեր։

Մուշ-Բիթլիսեան շրջանի դէպքերը նախանշան են քիւրդ-հայկական գալոց ընդհարումի... Գարնան կարող է նա պայթել։

Ի՞նչ պիտի լինի երկրի վիճակը այսուհետև... Այս հարցումը յաճախ ենք տալիս մեզ։ Սահմանադրութեան առաջին շրջանում չափազանց լաւատես եղանք, և մենք կանգնած էինք համաթիւրքական յեղափոխութեան ու վերածնութեան տեսակէտի վրայ։ Տարաբախտաբար, մեր անկեղծ ոգևորութեան յաջորդեց դառն յուսախաբութիւն։ Հիշտ է, որ սահմանադրական այս տարրական ազատութիւնների մէջ՝ մեր ժողովուրդը սկսեց առաջադիմել, բարգաւաճել. բայց միւս կողմից, եկանք այն տխուր համոզումին, որ երկրի մէջ չկան համապատասխան տարրեր՝ օրէնքի ոգով շարժելու, արդարութիւնը դատարանի, օրէնքի առաջ պաշտպանելու։

Ամբողջ պաշտօնէութիւնը, սկսած ամենապարզ զապթիէից մինչև միւդիրը, գայմագամը վարակուած են կողմնակալութեան ու կաշառակերութեան ախտով և կատարելապէս անգէտ են իրենց պաշտօնի պահանջներին։ Ամբողջ կառավարական մեքանիզմը փչացած, քայքայուած, անընդունակ է վերանորոգչական աշխատանքի. այլ բան էր, թէ տեղական ապակենտրոնացմամբ, հայերի լայն մասնակցութեամբ գործի ձեռնարկէին։ Դժբախտաբար, այդ բանը ներկայումս անհնարին է։ Սպասել այս վիճակի մէջ նորէն 10—20 տարի, որպէս զի նոր տարրեր առաջ գան (այն էլ՝ պայմանով, որ Թիւրքիան մնայ սահմանադրական)—թերևս կարելի էր մի բան յուսալ. բայց դժուար թէ այդքան տարիներ անցնին առանց մեծ արիւնհեղութիւնների...

Թւում է թէ նոյնիսկ թիւրք ցեղի անմիջական շահը կը պահանջէ, որ եւրոպական միջամտութիւն լինի և Եւրոպայի միջոցով առաջ տարի երկրի վերանորոգման գործը, մինչև նոր, հասուն տարրեր ի վիճակի յայտնուին՝ իրենց ձեռքն առնելու ղեկավարութիւնը։ Բայց... քանի որ թիւրքերը, նոյնիսկ „երիտասարդ“ կոչուածները անկարող են այդպիսի համարձակ ժեստ անել—մեզ կը մնայ մեր գլխի ճարը տեսնել։ Քիւրդը պիտի շարունակէ զարնել։ Հարկ է պաշտպանուել։ Հարկ է հոգալ—ազգովին հոգալ—պաշտպանութեան միջոցներ...

Ս—Ս

ԱՋԴ

ԲՈՐԾԱԿԱՑՆԵՐՈՒՆ ԵՒ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

„Դրօշակ“ի 1912 տարւայ վերջին թիւը ուղարկելու առթիւ՝ կը յիշեցնենք մեր գործակալ ընկերներուն և անհատ բաժանորդներուն.

1) Գործակալները պէտք է յայտնեն, թէ քանի՞ օրինակ ղրկելու է իրենց շրջանին համար։

2) Անհատ բաժանորդները պէտք է շուտով նորոգեն իրենց բաժանորդագրութիւնը, հակառակ պարագային կ'ըստիպւինք դադրեցնել թերթի առաքումը։

3) Հասցէները գրել որոշ և ընթեռնելի։ Հասցէի փոփոխութիւնը առանց վճարի է։

4) Տարեկան բաժնեգինն է 5 ֆրանկ կ ա ն խ ի կ։

Հասցէ՝ Réd. du „DROSCHAK“, Genève (Suisse)

„ԴՐՕՇԱԿ“Ի

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

		Մր.	Ս.
1.	Ազգասիրական ոգի (սպառած)	10	
2.	Յեղափոխական կեանքից (սպառ.)	5	
3.	Դարձեալ տպարան (սպառ.)	5	
4.	Դիւանագիտական սոցիալիզմ, Ֆ. ԷՆԳԵԼՍ (սպառ.)	40	
5.	Հայ Յեղ. Դաշնակցութեան Ծրագիրը (Դ. տպագր.)		
6.	Խուկունեան խմբի արշաւանքը (սպառ.)	20	
7.	Նարոյ յիշատակին (Զարո հաւաած) (սպառ.)	50	
8.	Հ. Յ. Դ. Ընդ. ընդհ. Ժողովի տեղեկագրութիւնը		
9.	Գրիչներ, Homo homini lupus, ՎԱՐԴԳԷՍ (սպառ.)	20	
10.	Երիտասարդներին, Պ. ԿՐԱՊՈՏԿԻՆ, թարգմ. Մ. Վ. (սպ.)	20	
11.	Ազատութեան նահապետին, Ղ. ԱՐԻՊ, Ա. խմբագ.)	30	
12.	„ „ „ Բ.	60	
13.	Սոցիալական տրամաբանութիւն, ԷՄԼԷՆ. (սպառ.)	50	
14.	Ազատութեան նահապետին, Ղ. ԱՐԻՊ. Դ.	30	
15.	Հայաստան և Մակեդոնիա	50	
16.	Սովկասեան վէրքեր, Է. ԱԿՆՈՒՆԻ (սպառ.)	3	—
17.	Հայրենիքի զաղափարը, ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆ (սպ.)	1	—
18.	Սոցիալ-դեմոկրատական կանոններ (Բ. տպագր.)		—
19.	Դէպի կռիւ, Է. ԱԿՆՈՒՆԻ (սպառուած.)	2	—
20.	Յեղափոխականներ, Ս. ՆԻՐՎԱՆԵԱՆ (սպառ.)	20	
21.	Նախագիծ Սովկասեան զարձուցեալութեան (Բ. տպ.)	20	
22.	Подвиги царизма, В. Араратскій	—	
23.	Les tueries de Bakou, A. ARAZI (սպառ.)	20	
24.	Յեղափոխական դաշն (սպառ.)	20	
25.	Հ. Յ. Դ. Ընդ. ընդհ. Ժողովի տեղեկագրութիւնը	–	
26.	Նոր Մահմէտականներին (թուրքերէն)	10	
27.	Les Plaies du Caucase, AKNOUNI	2	—
28.	Ազատութեան նահապետին, Ղ. ԱՐԻՊ Դ. գրոյի (սպ.)	40	
29.	Մեծ մարդասէրի դէմ (Դատաւորութիւն)	50	
30.	Վիսոցի բազէն, ՎՏԱՐԱՆԴԻ	50	
31.	Յեղափոխականի մտքեր, ՔԸ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ	1	—
32.	Հայորդիներ, ՍԱՄԱՆԹՕ	50	
33.	Սասունցի-Մուշի կռիւներ	10	
34.	Հայոց տանջանքները և Եւրոպան (դատախօսութիւն կարդաց. Բերլինում), Լ. Դ. ԲԵՐՆՇՏԱՅՆ.	50	
35.	Մարտական հրահանգներ, ԱՆԴՐԱՆԻԿ	1	—
36.	Միացէ՛ք, կոչ Թիւրքիոյ բոլոր ազգերին (թիւրքերէն)	10	
37.	Թիւրքական բանտերը, ՄԱՐ	25	
38.	Ռուսական կուսակցութիւններ Ռուսաստանում, ԱՐԱՐԱՏՍԿԻ	50	
39.	Հայաստան և Եւրոպա (դա ախօսութիւն կարդացւած Բերլինում), Դ. ԲՐԱՆԴԷՍ.	20	
40.	Արքիւ-Սիրոք (Պենսագրական), Ս. Մ.	25	
41.	Եւրոպ. կարծիքներ Հայ Դատի մասին.	30	
42.	Կանոնագիր Հ. Յ. Դաշնակցութեան (1907)	—	
43.	Դ-րդ Ընդհանուր Ժողովի որոշումներ (1907)	—	
44.	Հ. Յ. Դաշնակցութեան „Ծրագիր“ (1907)	—	
45.	Programme-minimum, Հ. Յ. Դ.	—	
46.	Rapport (Տեղեկագիր) ներկայացւած Միջազգային սոցիալիստ. կոնգրէսին (Շտուտգարտ)	—	
47.	Գեորգ Զաւուշ.	20	
48.	Déclaration du Congrès des Partis d'opposition de l'Empire Ottoman	—	
49.	Le Criminel sur le Trône, E. AKNOUNI	10	
50	Ցնցողարարագիր Օսմանեան կայսրութեան ընդդիմադիր տարրերու կոնգրէսին	—	
51.	Հ. Յ. Դաշնակցութեան „Ծրագիր“ (Ռուսերէն)	—	
52.	Սոցիալիստի նամակներ, ԱՐԱՐԱՏՍԿԻ	1	—
53.	Նախագիծ Ժողովրդ. ինքնապաշտպան., ԴՈՒՐՄԱՆ	40	
54.	Ընդհ. կրթութեան թեորիաներ, Պր. Ժ. ՕԼԻՎԻԷ, թարգմ. ԱՏՈՄ.	50	
55.	Ուղեցոյց ընկերներին, ԱՐԱՐԱՏՍԿԻ.	30	
56.	Համաժողովրդական բանակ, Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ.	30	
57.	Հ. Յ. Դաշնակցութեան „Ծրագիր“ (1909)	—	
58.	Որոշումներ Հ. Յ. Դ. Ընդ. Ընդհանուր Ժողովի	—	
59.	Տեղեկագիր (Rapport) ներկայացւած Միջազգային սոց. կոնգրէսին (Կոպենհագ), Մ. Վ.	20	
60.	Նոյնը գերմաներէն լեզուով.	20	
61.	Վերածնող հայրենիքը եւ մեր դերը (Դաշնակցութեան 20-ամեակի առիթով), ՄԼԲ. ՎԱՐԱՆԴԵԱՆ	3	—
62.	Հոսանքներ (Մարխիզմ, Անարխիզմ, Սինդիկալիզմ), ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆ	3	—

ՄԼԾԱԴԻՐ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Բաքէն, Բասէնի եւ Դէյի-Բաբայի կռւի մէդալիներ (երկու խմբանկար), Թաթոլ, Թուման, Թումանի մարտական խումբը, Խան, Կայծակ, „Կայծակ“ ձիաւոր խումբ, Կարսի ուժանակի զոհերը, Կարս, Կուռոբաշի նահատակները, Հրայր, Պեսօ, Սամաթիոյ հերոսներ, Սամօ, Սերոբ-Աղբիւր, Սէրէմնեան, Վազգէն, Վազգէնի մարտական խումբը, Վանեան, Տարօնի Առիւծը եւ իր կռիւները, Բրիսսափոր:

Հատը 50 սանթիմ

Դէպի Ազատութիւն, Հայկական ազատամարտ (խոշոր դիմոյ):

Հատը 1 ֆրանկ

ԲԱՑ ՆԱՄԱԿՆԵՐ

Ալրո, Արաբօ, Արշաւիր-Կամսարական, Աղդ, Բաքէն, Գէորգ-Զաւուշ, Դնունի, Գուրգէն, Եզիպացի, Երկաթ, Թաթոլ, Թուման, Խան, Խան-Կարապետ, Խէչօ (դարաբաղցի), Կայծակ, Կարս, Կարս (Աղաջանեան), Կորկոտեան, Կրէտացի, Հրայր, հայկական Ազատամարտ, Միսաքեան, Նիկոլ (դարաբաղցի), Շաւրօ, Պեսօ, Սամօ, Սերոբ-Աղբիւր, Սէրէմնեան, Սուրէն, Սեւիսանեան, Վազգէն, Վանեան, Տարօնի Առիւծը եւ իր ձագուկները, Բրիսսափոր, Ֆինլանդիա - Կովկաս:

Բաց նամակներու 3 ժողովածու՝ 108 հատ՝ 5 Մր.

5 Ֆրանկէն պակաս ապարդիւն չի ընդունիր ոչ պատկերներու եւ ոչ բաց նամակներու համար:

„POUR LES PEUPLES D'ORIENT“

Organe des Revendication Arménien

Paraissant le 10 et le 25 de chaque mois

Directeurs:

Francis de Pressensé et Victor Bérard

Secretaire de la Rédaction:

Jean Longuet

Abonnements: 10 frs.

„Pour les Peuples d'Orient“ սկսած է հրատարակել ամիսը երկու անգամ, ֆրանսերէն և անգլիերէն բաժիններով

Հասցէ՝ 31, Villa d'Alesia (III-ter, rue d'Alesia)

Paris, XIV.